

1719 hug.

1030

1030

1069

ՆՈՐ ԴԱՍԱԳԻՐԲ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Ա. Ա. ՍՈՒՐԵՆՆԱՆ

542

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



5171



Զմիշտնիս

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԵՆՆ

Ա. ՊՕՒՐՍ

ԴԱՏՈՒՆ Ս. Զ. ԵՒ ԵԱԶՄԱՅԱՆՆ

ԵԻՒ-ՃՈՒԹ ԺՈՐՅ ԶԻՒՒԿԵԼԵ ԶՊՈՒԹԵՂ ԲԻ-Ց

1876

№60



Ա.ՉԴ

Ներկայ համաժողովը դասագիրքը, երկրորդ տպագրութեան առթիւ, ամբողջապէս վերաքննուած եւ ծանամակիս յառաջդիմական պահանջմանց համեմատ կարեւոր փոփոխութիւններ քննուած է, փոփոխութիւններ՝ որ յարկարագոյն եւս կ'ընեն զինքը, հայ մանկանց ուսուցանելու իրենց նախնեաց՝ որչափ կարելի է՝ նշմարիտ կեանքը, եւ սիրել տալու իրենց՝ մասսայ հասակէն սկսեալ՝ Հայրենասէր ու Հայաստան սէրերը:

Ըստ ինչդրանաց բազմաց, արժան համարուեցաւ խորաքանջիւր համարի վրայ հարցումներ դնել:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ԲՆԻՀՈՆՈՒՐ ԿԻՏԱԼԻՑ

— Հայոց ազգին պատմութիւնը քանի մասերու կը բաժնուի :

1. Հայոց ազգին պատմութիւնը վեց զլխաւոր մասերու կը բաժնուի, որք են.

Մասն առաջին. Հայկազանց իշխանութիւն :

Մասն երկրորդ. Երշակունեաց իշխանութիւն :

Մասն երրորդ. Մարդպանաց և Բնտիկանաց իշխանութիւն :

Մասն չորրորդ. Քաղրատունեաց իշխանութիւն :

Մասն հինգերորդ. Ուրբինեանց իշխանութիւն :

Մասն վեցերորդ. Անիշխանութիւն :

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԿԱԶԱՆՑ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

— Հայկազանց իշխանութիւնը երբ սկսաւ և երբ վերջացաւ :

2. Հայկազանց իշխանութիւնն Հայկ անուամբ մտրդէ մը սկսաւ՝ Քրիստոսէ, 2130 տա-

րի յառաջ. և 1800 տարիի չափ զիմանալէ ետք՝
վերջացաւ Հայոց Այսէ թագաւորին օրովը:
Հայկայ անունով մեր ազգը Հայ կը կոչուի:

ՄԱՍՆ ԵՐԿՐԱՐԳ

ԱՐՀԱՎՈՒՆԵԱՑ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՒՆ

— Արշակունեաց իշխանութիւնը երբ սկսաւ և երբ վերջացաւ:

3. Արշակունեաց իշխանութիւնը Այդարշակ
անունով թագաւորէն սկսաւ. Քրիստոսէ 130
տարի առաջ. և 580 տարի զիմանալէ ետք՝
վերջացաւ Արտաշէս Գ. թագաւորին օրովը:
Այդարշակ հայ չէր, այլ Պարթև ըսուած ազ-
դէն էր, և Հայոց թագաւոր եղաւ:

ՄԱՍՆ ԵՐԿՐԱՐԳ

ՄԱՐԶՊԱՆԵՑ ԵՒ ՈՍՏԻՎԱՆԵՑ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՒՆ

— Մարզպանաց և Ոստիկանաց իշխանութիւնն երբ սկսաւ և
երբ վերջացաւ:

4. Մարզպանաց իշխանութիւնը Ահհմիհր-
շապուհ անունով իշխանէն սկսաւ. Քրիստոսէ

434 տարի ետքը. և 450 տարիի չափ Մարզ-
պաններ, յետոյ Ոստիկաններ կառավարեցին զՀա-
յաստան. այս իշխաններուն վերջինն եղաւ Աշոտ
իշխանը. Քրիստոսէ 859 տարի ետքը:

Ահհմիհրշապուհ Հայ չէր, այլ Պարսիկ ը-
սուած ջեղէն էր:

ՄԱՍՆ ԶՈՐԲԱՐԳ

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՒՆ

— Բագրատունեաց իշխանութիւնն երբ սկսաւ և երբ վեր-
ջացաւ:

5. Բագրատունեաց իշխանութիւնը Աշոտ ա-
նունով թագաւորէն սկսաւ. Քրիստոսէ 885
տարի ետքը, և 160 տարի զիմանալէ ետք՝ վեր-
ջացաւ Գագիկ Արկրորդ թագաւորին օրովը:

Աշոտ թագաւորը Հայոց Բագրատունի ը-
սուած ջեղէն էր:

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԳ

ԹԱԻԻՆՆԵԱՆՑ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

— Գուրբինանց իշխանութիւնն երբ սկսաւ և երբ վերջացաւ :

6. Ուուրբինանց իշխանութիւնը Ուուրբէն աւանուով իշխանէն սկսաւ՝ Բրիխատու 1080 տարի ետքը . և 295 տարի զիմանալէ ետք, վերջացաւ Լեան Վեցերորդ Թագաւորին օրովը :
 Ուուրբէն Իւազրատունի ցեղէն էր :

ՄԱՍՆ ՎԵՅԵՐՈՐԳ

ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

— Անիշխանութեան ժամանակն որն է :

7. Բրիխատու 1375 թուականէն մինչև այսօր, 501 տարի է, որ Հայերը իրենց իշխանութիւնը կորուսած են, և իրենց Հայաստան կրկնը երեք Տիրապետներու ձեռքն է :
 Այս Տիրապետներն են, Տաճկաց Սուլթանը, Ռուսաց Վայսրը և Պարսից Շահը :

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԻՍԽԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՎԱՋԱՆՑ

Հայկազանց իշխանութիւնը երեք զկաւար ժամանակներու կը բաժնուի :

Այս ժամանակները կը կոչուին .
 Ա. Տանուտիրական Նաճապետութիւն :
 Բ. Օխուորական Նաճապետութիւն :
 Գ. Թաղաւորութիւն :

Ա

ՏԱՆՈՒՏԻՐԱՎԱՆ ՆԱՅՍՊԵՏՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Հ.Ռ.Յ.Կ. 80 տարի

Բրիխատու աւուլ 2130—2030

— Ո՛ր է մեր Հայրենիքն և ո՞վ է մեր Նախահայրը :

1. Հայաստան մեր Հայրենիքն է, և մեր Նախահայրն եղաւ Հայկ :
 — Հայկ բանի հոգն ունէր հետը :
 2. Հայկ շատ զաւակներ, թոռներ և ծառայներ ունէր՝ որք երեք հարիւրէն աւելի էին :

— Հայկ որսն դէմ պատերազմ ըրաւ և ինչու համար:

3. Հայկ պատերազմ ըրաւ Ռէլ անուանով բռնաւոր մարդու մը դէմ, որովհետև Ռէլ կուգէր որ Հայկ իրեն հնազանդի և Աստուծոյ պէս երկրպագութիւն ընէ իրեն:

— Ռէլ էնչ պատգամ ղրկեց Հայկայ:

4. Ռէլ պատգամ ղրկեց Հայկայ՝ և ըսաւ. «Նկուր, հնազանդէ ինձ, ապա թէ ո՞չ ղքեղ և քու զաւակներդ կը մեռցընեմ»:

— Հայկ ինչու չհնազանդեցաւ Ռէլայ:

5. Հայկ ազատասէր էր և չուզեց Ռէլայ հնազանդիլ. իր քիչնոր մարդիկը ժողովեց ու պատրաստուեցաւ Ռէլայ դէմ կռուիլ, և գնաց Ամնայ ծովուն քով:

— Ռէլ էնչ եղաւ:

6. Ռէլ երկաթէ զրահներ հագած՝ շատ զորքով Հայկայ վրայ եկաւ ու պատերազմեցաւ. բայց Հայկ քաջութեամբ յաղթեց անոր զորացն՝ և նետով կուրծքէն զարկաւ սպաննեց զՌէլ:

— Ռէլայ մեռնելէն յետոյ Հայկ էնչ ըրաւ:

7. Հայկ իր ազատութեան թշնամին աշխարհէն վերցընելուն համար շնորհակալ եղաւ Աստուծոյ, և ուրախ սրտով տունը դարձաւ. և կըսուի թէ 400 տարի ապրելէ ետք մեռաւ:

ՀԱՅԿԱՅ ՅԱՋՈՐԴՆԵՐԸ 225 տարի

բ. Վ. 2050—1825

— Հայկայ որսնք յաջորդեցին:

8. Հայկայ յաջորդներն եղան որդւոց որդի՝ Արմենակ 66 տարի. Արամայիս 40 տ. Ամասիա 36 տ. Գեղամ 50 տ. Հարմա 33 տ:

— Հայկ և իր յաջորդներն ինչպէս կառավարեցին զՀայաստան:

9. Հայկ և իր յաջորդներն հայրաբար և խաղաղութեամբ կառավարեցին մեր ազգը, և Հայաստանի մէջ քաղաքներ ու զիւղեր շինեցին: Ասոնք չուզեցին ժողովոգեան վրայ իշխել, և ժողովուրդէն զօրք չառին. այս պատճառաւ հանրապետական Ասիական կոչուեցան:

Բ

ՁԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՆԱՀԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ԱՐԱՄ 58 տարի

բ. Վ. 1825—1767

— Արամ ո՞վ և ինչպէս մէկն էր:

10. Հարմայի մեռնելէն ետք տեղը յաջորդեց իր որդին Արամ:

Այս նահապետը քաջ և հայրենասէր մարդ մ'էր:

— Արամայ ատեն որո՞նք Հայաստան արշաւած էին:

11. Արամայ ժամանակ Քաբէլացիք՝ Մարք և Կապադովկացիք Հայաստան արշաւած էին:

— Արամ ինչո՞ւ գննուորական նահապետ կոչուեցաւ:

12. Արամ՝ այս թշնամեաց զէմ պատերազմելու համար, Հայոց կտրիճները ժողովեց ու գննուոր ըրաւ. այս պատճառաւ Օլնուորական Կահառէր կոչուեցաւ:

— Ի՞նչ ըրաւ Արամ իւր թշնամեաց:

13. Արամ Հայոց 50,000 կտրիճ զօրքելովը Հայաստանի թշնամեաց վրայ վազեց, զանոնք բոլորովին զուրս վռնտեց և անոնց իշխանները սարսափեցուց:

— Արամ Կապադովկացեաց ի՞նչ ըրաւ:

14. Արամ Կապադովկացեաց երկրին տիրեց, և բռնի հրամայեց որ այն տեղի մարդիկն իրենց մայրական լեզուն ձգեն և հայերէն խօսին:

— Ո՞վ էր Նինոս և ի՞նչ ըրաւ Արամայ:

15. Արամ բարեկամ եղաւ Ատրեստանցւոց Նինոս թագաւորին հետ. որովհետեւ Նինոս մարդարիտով զարդարուած թագ մը ընծայ զրկեց Արամայ, և զինքը Մեծ Իշխան անուանեց:

— Արամ որչափ իշխեց. և մեր ինչո՞ւ Արմէն կամ Կրմէնի կը կոչուենք:

16. Արամ 58 տարի իշխանութիւն ըրաւ ու մեռաւ: Արամայ անուանով օտար սպիտակ գլեզ Արմէն կամ Կրմէնի կը կոչեն:

Ա Ր Ա Յ Գ Ե Ղ Ե Յ Յ Ի Կ 26 տարի, եւ

Կ Ա Ր Գ Ո Ս 18 տարի:

բ. Վ. 1767—1723

— Արամայ ո՞վ յաջորդեց:

17. Արամայ յաջորդեց իր որդին Արայ. այս իշխանը շատ զեղեցիկ ըլլալուն համար՝ Արայ Գեղեցիկ կոչուեցաւ:

— Ո՞վ էր Շամիրամ և ի՞նչ կ'ուզէր:

18. Շամիրամ Ատրեստանցւոց վատ և հեշտամոլ թագուհին՝ որ Նինոս թագաւորին կնիկն էր, Արայի զեղեցիկութիւնը լսելով ուզեց որ նմա հետ կարդուի, բայց Արայ առաքիւնի ըլլալուն՝ մերժեց անոր խնդիրը:

— Շամիրամ ինչո՞ւ Հայաստան վազեց:

19. Շամիրամ ուզեց որ բռնութեամբ իւր կամքը կատարէ. ասոր համար մեծ բանակով Հայաստան վազեց:

—Արայ Ինչ ըրաւ Շամիրամայ դէմ:

20. Արայ Հայոց զօրքովը պատերազմեցաւ Շամիրամայ դէմ. բայց կռուելու ժամանակ զարնուեցաւ ու մեռաւ, և Հայերն յաղթուեցան:

—Շամիրամ Ինչ ըրաւ Հայաստանի մէջ:

21. Շամիրամ Հայաստանի տէր եղաւ, մեծ ու զեղեցիկ քաղաք մը շինեց, և անունը զրաւ Շամիրամակերտ (Շամիրամէն շինուած), յետոյ այս քաղաքը Ան կոչուեցաւ:

—Շամիրամ զՀայերն Ինչպէս հանդարտեցուց:

22. Հայերը Շամիրամայ բռնութենէն ազատելու համար պատերազմի ելան. բայց Շամիրամ զանոնք հանդարտեցուց, և Արայի Վարդոս անունով 12 տարեկան որդին Հայաստանի իշխան զրաւ:

—Շամիրամ ու Վարդոս Ինչպէս մեռան:

23. Անդամ մը, Շամիրամ իւր Մինուաս տղուն դէմ պատերազմեցաւ. Վարդոս ալ Շամիրամայ օգնութեան գնաց, բայց թէ Շամիրամ և թէ Վարդոս այն պատերազմին մէջ մեռան:

—Վարդոսէն յետոյ Ինչ եղան Հայք:

24. Վարդոսի մեռնելէն ետք, Հայք իրենց

ազատութիւնը բողբոլովն կորսնցուցին և Ասորեստանցուց հարկատու եղան:

Ա Ն Ո Ւ Հ Ա Ի Ա Ն 63 տ.

Եւ իւր յաջորդները մինչեւ Ս Կ Ա Յ Ո Ր Դ Ի 912 տ.

Գ. Ա. 1723—748

—Վարդոսէն յետոյ Հայաստան Ինչպէս կառավարուեցաւ:

26. Վարդոսի մեռնելէն ետք, Ասորեստանցիք կառավարեցին զՀայաստան մինչև 14 տարի. յետոյ Անուշաւան՝ Վարդոսի որդին՝ Ասորեստանի Մինուաս թագաւորին հրամանաւ Հայաստանի Մահապետ եղաւ 63 տարի:

—Հայկայ անդրանիկ ցեղին իշխանութիւնն Ինչպէս դադարեցաւ:

27. Անուշաւան առանց զաւակի մեռնելուն, Հայկայ Անդրանիկ ցեղին իշխանութիւնը զադարեցաւ, և ուրիշ Հայ իշխաններ Մահապետ եղան մեր ազգին:

—Անուշաւանի յաջորդող իշխանները որոնք են:

27. Անուշաւանի յաջորդեցին իրարու ետեւ. Պարէտ 50 տարի, Արբակ 44 տ. Օւաւան 37 տ. Փառնակ 53 տ. Սուր 25 տ. Հաւանակ 50 տ. Սալաթակ 22 տ. Հայկակ Ա. 18 տ. Ամբակ Ա. 14 տ. Առնակ 17 տ. Շաւարշ Ա. 6 տ.

Նորայր 24 տ. Ստամ 13 տ. Կար 4 տ.
 Գուռակ 18 տ. Հրանտ Ա. 27 տ. Բեճակ 15 տ.
 Գրզակ 28 տ. Հորոյ 3 տ. Օարմնոյր 14 տ.
 Շաւարշ Բ. 43 տ. Պերճ Ա. 35 տ. Արբուն
 27 տ. Պերճ Բ. 40 տ. Բաղուկ 50 տ. Հոյ 44 տ.
 Կոռնակ 31 տ. Ամբակ 27 տ. Կայսրակ 45 տ.
 Փառնաւազ Ա. 33 տ. Փառնակ Բ. 40 տ.
 Սկայորզի 17 տ:

— Սուր նահապետին օրով ի՞նչ եղաւ:

28. Սուր նահապետին օրով, Քանանացի
 կոչուած ազգէն մտա մը՝ Հայաստան դաղթե-
 ցաւ և Քնթունի կոչուած Հայ նախարարա-
 րութիւնը կազմեց:

— Կարդոսի յարգներն որո՞ւ հարկատու էին և ի՞նչ ըրաւ
 Հայկակ Ա.:

29. Կարդոսէն սկսեալ Հայոց բոլոր նահա-
 պետները հարկատու էին Ատրեստանցոց. Հայ-
 կակ Ա. Նահապետը հարկ չտարու համար պա-
 տերազմեցաւ Ատրեստանցոց Բերքոս թագա-
 ւորին դէմ, բայց յաղթուելով մեռաւ:

— Չարմնոյրի վրայ ի՞նչ կը պատմուի:

30. Չարմնոյր Նահապետը Տրովայի Պրիս-
 մոս թագաւորին օգնութեան դնաց Յունաց դէմ,
 և պատերազմին մէջ զարնուեցաւ:

— Սկայորզիի վրայ ի՞նչ կը պատմուի:

31. Սկայորզի Նահապետը քաջ իշխան մը
 ըլլալով՝ Հայաստանի վրայ յարձակող բոլոր
 թշնամիները վռնտեց և Հայերը հանգիստ ապ-
 իեցուց:

— Սկայորզիի ատեն ի՞նչ պատահեցաւ:

32. Ատր ատեն, Հայաստան փախան Մտ-
 րեստանի Սենեքերիմ թագաւորին երկու տղայքն,
 Ագրամել և Սանասար, որոնք իրենց հայրը
 սպաննած էին:

— Ագրամելի և Սանասարի ցեղերն ի՞նչ եղան:

33. Ագրամելի ցեղն Հայոց մէջ մեծ նա-
 խարարու թիւն եղաւ՝ Արծրունիք անունով. Սա-
 նասարի ցեղն ալ ուրիշ նախարարութիւն եղաւ,
 Սասունիք անունով:

— Կարդոս և իւր յարգներն Հայոց վրայ իրբն ի՞նչ կ'իշխեին:

34. Կարդոսէն մինչև Սկայորզի, Հայ Նա-
 հապետաց ամենքն ալ Ատրեստանի թագաւո-
 րաց կողմէն իբր վերակացու կ'իշխեին Հայաս-
 տանի:

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱՆՆԵՐ

ՊԱՐՈՅՐ 48 տ. եւ իւր յաջորդները 135 տ.

բ. Վ. 748—565

—Ո՛վ եղաւ Հայոց առաջին թագաւորը:

35. Հայոց առաջին թագաւորն եղաւ Պարոյր անունով իշխանը՝ որ Սկայորդի Նահապետին որդին էր:

—Պարոյր Ինչպէս թագաւոր եղաւ:

36. Պարոյր մեծ բարեկամութիւն մը ըրած էր Ախաբար անունով մէկու մը՝ որ Մար ըստուած ազգին թագաւորն էր. Ախաբար ալ Պարուրի գլուխը թագ դրաւ, ձեռքը թագաւորական զաւազան տուաւ և զինքը Հայոց թագաւոր անուանեց:

—Պարոյր որչափ իշխեց և որո՞նք էին իւր յաջորդները:

37. Պարոյր 46 տարի խաղաղութեամբ Հայերը կառավարելէն ետքը մեռաւ. իրեն յաջորդեցին՝ Հրաչեայ 22 տ. Փառնաւաղ Բ. 13 տ. Պաճոյճ՝ 35 տ. Առնակ 8 տ. Փաւոս 17 տ. Հայկակ Բ. 36 տ. Արուանդ Ա. 4 տ:

—Բազրատունեաց ցեղն Ինչպէս սկսաւ:

38. Հայկակ Բ. Ատրեստանի Նարուզորդոնոսոր թագաւորին հետ դնաց Արուսաղէմ քաղաքը առաւ, Հրէից թագաւորութիւնը կործանեց, և նոցա իշխաններէն Շամբատ կամ Սմբատ անուն մէկը Հայաստան բերաւ: Այս իշխանին ցեղէն յառաջ եկաւ Բազրատունի կոչուած մեծ նախարարութիւնը:

ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆ Վ. 45 տ.

բ. Վ. 565—520

—Ինչպէս մէկն էր Տիգրան Ա.:

39. Տիգրան Ա. Արուանդ Ա.ի որդին՝ քաջ և խելացի թագաւոր մ'էր, Հայաստանը ծաղկեցուց, Հայերն հարուստու զօրաւոր ըրաւ և Պարսից Աիւրոս թագաւորին հետ բարեկամ եղաւ:

—Ո՛վ թշնամի եղաւ Տիգրան Ա.ի:

40. Մարայ Աժդահակ թագաւորը Աիւրոսի թշնամին էր. երբ լսեց որ Աիւրոս և Տիգրան մէկ մէկու հետ միացեր են՝ վախցաւ, և խորհեցաւ որ հնարքով մը սպաննէ զՏիգրան:

—Աժդահակ Ինչ միջոց խորհեցաւ Տիգրանը սպաննելու:

41. Աժդահակ իւր չար նպատակին հասնե-

լու համար, Տիգրանին Տիգրանուհի քայրն ի-
րեն կին առաւ, և ուզեց որ Տիգրանուհին
ձեռքովը սպաննէ զՏիգրան:

— Տիգրանուհի ի՞նչ քրաւ:

42. Տիգրանուհի գաղտնի կերպով իւր Տիգ-
րան եղբօրն խնայուց Աժդահակայ չար միտքը:
Տիգրան ալ Աիւրոսի հետ միացած՝ Աժդահա-
կայ դէմ պատերազմի ելաւ:

— Ի՞նչ եղաւ Աժդահակ:

43. Տիգրան պատերազմեցաւ Աժդահակայ
զօրացը դէմ և յաղթեց, Աժդահակը նիզակով
զարկաւ սպաննեց ու նորա կինն ու որդիքը գերի
բերաւ Հայաստան:

— Մեծն Տիգրան որ քաղաքը շինեց և որչափ թագաւորեց:

44. Մեծն Տիգրան Տիգրանակերտ քաղա-
քը շինեց՝ իւր քրոջը բնակութեան համար, և
45 տարի փառօք թագաւորելէն ետքը մեռաւ:

Տիգրանայ յաջորդները 195 տ.

Մինչև Հայկազանց թագաւորութեան կործանումը

Գ. Ա. 320—323

— Ո՞վ յաջորդեց Տիգրանայ:

45. Տիգրանայ կրտսեր որդին Ահաթան յա-

ջորդեց իրեն. այս թագաւորը սաստիկ քաջ լի-
նեւուն՝ Հայերն և Արացիք (Աիւրծի) իր պատ-
կերը շննելով իբր Աստուած պաշտեցին զինքը
երկար ատեն. Ահաթան 27 տարի թագաւորեց:

— Ահաթան որո՞նք յաջորդեցին:

46. Ահաթանի յաջորդեցին Առաւան 48 տ.
Աերսէհ 35 տ. Օլարսէհ 16 տ. Արզում 9 տ.
Բայզամ 14 տ. և Այան 20 տ:

— Այան թագաւորն ի՞նչ քրաւ:

47. Այան թագաւորը Շամիրամակերտ քա-
ղաքը նորոգեց՝ որ իր անունովը Այան կոչուեցաւ
մինչև հիմա:

— Ո՞վ եր Ահսէ և ի՞նչ եղաւ:

48. Այանի յաջորդեց իր որդին Վահէ՝ որ
45,000 զօրքով պատերազմեցաւ Մակեդոնա-
ցւոց (Առնալուտ) Մեծն Ալեքսանդր թագա-
ւորին դէմ. բայց յաղթուեցաւ և մեռաւ, 26
տարի թագաւորելէն ետք:

— Վահէէն ետք Հայաստանի որո՞նք տիրեցին:

49. Վահէի մեռնելէն ետք Մակեդոնացիք
տիրեցին բոլոր Հայաստանի, և Հայկազանց իշ-
խանութիւնը վերջացաւ՝ Հայկէն մինչև Վահէ
1779 տարի զիմանալէ ետք:

ՅՈՒՆԼՈՒՅԺ Ա. ՄԱՍԻՆ

ԿՈՒՍԱԿԱԼ Բ 176 տարի

բ. Ա. 325—149

— Ո՛ր եղաւ առաջին կուսակալը :

50. Վահէի մեռնելէն ետք, Միհրան անու-
նով իշխան մը Մակեդոնացւոց ձեռք չայաս-
տանի իշխան եղաւ, և Սոսակալ կոչուեցաւ :

— Միհրանին որո՞նք յաջորդեցին :

51. Միհրան 5 տարի իշխեց և իրեն յա-
ջորդեց Նեոպտղոմէոս. այս կուսակալը չայոց
բռնութիւն ընելուն՝ Ազուարդ չայոց մեծ իշ-
խանը երկու տարի ետքը զինքն չայաստանէն
վճնտեց, և ինքն եղաւ կուսակալ :

— Նեոպտղոմէոս ի՞նչ եղաւ :

52. Մակեդոնացւոց միջնորդութեամբ՝ Նեո-
պտղոմէոս դարձեալ չայաստան եկաւ և Ա-
զուարդին երկրորդն եղաւ. բայց յետոյ նորէն
վճնտուեցաւ, և պատերազմի մէջ զարնուելով
մեռաւ :

— Ազուարդի որո՞նք յաջորդեցին :

53. Ազուարդ 36 տարի իշխելէն յետոյ մե-

ռաւ. իրեն յաջորդեցին շրանտ օտարագրի իշ-
խանը 43 տարի. Արտաւազ չայ իշխանը 50
տարի. Արտաշաս օտարագրի իշխանը 30 տարի.
նաև Արտաւազը օտարագրի իշխանը 10 տարի :

ՄԱՍՆ ԵՐԵՐՈՐԻ

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Արշակունեաց իշխանութիւնը երկու զլխաւոր
ժամանակներու կը բաժնուի, որք են,

Ա. Ազատ թագաւորութիւն.

Բ. Չարկատու թագաւորութիւն :

Ա

ԱՁԱՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. 22 տ. Ա. Ա. Ա. Ա. Ա. 13 տ.

— Առաջին Արշակունի թագաւորն ո՞վ եղաւ :

54. Պարթև ըսուած ազգին Արշակ թագա-
ւորը շատ զօրացած ըլլալով, Մակեդոնացի-
ներն չայաստանէն վճնտեց, և իւր Վաղար-
շակ անուն եղբայրն չայոց վրայ թագաւոր դրաւ :

— Հայոց այս թագաւորութիւնն որն անունով Արշակունեաց կոչուեցաւ:

55. Արշակայ անունով մեր այս թագաւորութիւնն Արշակունեաց իշխանութիւն կոչուեցաւ:

— Վաղարշակ Բնչպիսի մարդ էր:

56. Վաղարշակ քաջ և իմաստուն թագաւոր մ'եղաւ. ինքը թէպէտ Հայ չէր, բայց Հայերը սիրեց և կարգ ու կանոն սորվեցուց նոցա. շատ զօրք ժողովեց ու բանակ կազմեց:

— Վաղարշակ Բնչ երևելի գործեր քրաւ:

57. Վաղարշակ պատերազմ քրաւ Վապազովկիոց Մորփիւղղիկս իշխանին դէմ. յաղթեց նմա, և Հայոց քաջութիւնը տեսնելով՝ ուզեց որ Հայոց պատմութիւնը կարգայ և իմանայ թէ ով է Հայոց նախահայրը: Վաղարշակ Հայաստանի մէջ Հայոց պատմութիւնը չկրցաւ գտնել. որովհետեւ կրտսի թէ հին ատենի Հայերը տղէտ էին, ոչ գիր ունէին և ոչ ուսմունք:

— Հայոց պատմութիւնն ո՞վ գտաւ:

58. Մար Աբաս Վատինա անուն մարդ մը Ատրեստան գնաց, և Մինուէ քաղաքին մէջ Հայոց պատմութիւնը գտնելով՝ առաւ Վաղարշակին բերաւ:

— Ո՞վ էր Արշակ Ա. և Բնչ քրաւ:

59. Վաղարշակ 22 տարի թագաւորելով մե-

ռաւ. իրեն յաջորդեց Արշակ Ա. իր որդին՝ որ Պնտացի բաւաժ ժողովըրոց դէմ պատերազմ քրաւ և յաղթեց նոցա. 13 տարի թագաւորեց ու մեռաւ:

— Արշակ Ա. Բնչն իրեն Աստուած պաշտուեցաւ Պնտացիներէն:

60. Պնտացիք Արշակ Ա.ին սաստիկ քաջութիւնը տեսնելով՝ երկար ատեն իրը Աստուած պաշտեցին զինքը, վասն զի Արշակ նիղակօյն ապառաժ քարը ծակեր էր:

Ա Ր Տ Ա Շ Է Ս Ա. 25 տարի:

Բ. Ա. 114—89

— Արշակ առաջնոյն ո՞վ յաջորդեց:

61. Արշակ Ա.ին յաջորդեց իւր որդին Արտաշէս Ա. որ հզօր և փառասէր թագաւոր մ'եղաւ:

— Արտաշէս Ա. Բնչ գործեց:

62. Արտաշէս անհամար զօրք ժողովեց. Պարթևաց, Պարսից, Յունաց և ուրիշ զանազան ազգերու դէմ պատերազմ քրաւ. յաղթեց և տիրեց նոցա:

— Արտաշէսի զօրաց բազմութեան համար Բնչ կը պատմուի:

63. Արտաշէսի զօրաց համար կը պատմուի

թէ այնչափ շատ էին, որ եթէ մէկ մէկ քար նետէին՝ բլուր մը կը ձևանար. եթէ մէկ մէկ նետ նետէին՝ զետիւնը շուք կը լըսար:

— Արտաշէս ինչո՞ւ սպաննուեցաւ իւր զօրքերէն:

64. Այս անթիւ զօրքերը 25 տարի պատերազմ ըրին Արտաշիսի հրամանաւ. ի այց ուզելով անոր բռնութենէն ազատիլ, խռովութիւն մը հանեցին և Արտաշէսն սպաննեցին:

— Արտաշէս ի՞նչ նշանակոր խօսք ըրաւ մեռնելու ատեն:

65. Արտաշէս մեռնելու ատեն ըսաւ. Աստուծոյ անցաւ անցաւ արքի:

Տ Ի Գ Բ Ա Ն Բ. 54 տարի

Բ. Ա. 89—35

— Արտաշէս Ա. ի ո՞վ յաղորդեց:

66. Տիգրան Բ. Արտաշիսի որդին՝ իւր հօրը տեղ թագաւորեց չայոց վրայ, և շատ զօրք ժողկելով չայաստանի թշնամիները վճնտեց:

— Տիգրան ի՞նչ ըրաւ Միհրդատոյ:

67. Տիգրան Բ. իւր Միհրդատ քեռայրը Պոնտոսի թագաւոր դրաւ: Այս Միհրդատը քաջ և խելացի մարդ մ'էր. երկար ժամանակ մեծամեծ պատերազմներ ըրաւ չռովմայեցւոց դէմ:

— Հռովմայեցւոց զօրասէտներն որո՞նք էին և Միհրդատ ի՞նչ ըրաւ անոնց:

68. չռովմայեցւոց զօրքին զօրավարքն էին նախ Սիրլա, յետոյ Աուկուլլոս. Միհրդատ Տիգրանայ օգնութեամբ շատ անգամ յաղթեց անոնց և սարսափեցոյց չռովմայեցիները:

— Տիգրան ինչո՞ւ յաղթուեցաւ Աուկուլլոսէն:

69. Տիգրան անգամ մը անխոհեմութեամբ յաղթուեցաւ Աուկուլլոսէն, և Աուկուլլոս Տիգրանակերտ քաղքին տիրեց, մէջէ բոլոր հաստատութիւններն ալ յափշտակեց:

— Ո՞վ էր Պոմպէոս և ի՞նչ եղաւ ասոր ատեն:

70. Աուկուլլոսէն յետոյ չռովմայեցւոց զօրավար եղաւ Պոմպէոս. ասոր ատենը Միհրդատայ որդին՝ Փառնակէս՝ սոսկալն վատութեամբ ուզեց որ իւր հայրն չռովմայեցւոց մատնէ:

— Միհրդատ ի՞նչ պէս մեռաւ:

71. Միհրդատ իւր որդւոյն ձեռքէն նեղը մտնելով թոյն խմեց, դանակով ալ ինքզինքը զարկաւ և այնպէս մեռաւ 72 տարեկան:

— Տիգրան ի՞նչ ըրաւ իւր Տերութեան ատեն:

72. Տիգրան ալ իւր Տերութեան ատեն Պոմպէոսի հետ հաշտուեցաւ և չայաստանէն դուրս շատ երկիրներ տուաւ չռովմայեցւոց:

— Տիգրան ինչն գարձեալ պատերազմեցաւ Հռովմայեցւոց դէմ և ինչ գործեց:

73. Տիգրան երբ իմացաւ որ Հռովմայեցիք Հայաստանի ալ տիրել կ'ուզեն, իւր Քարղափրան զօրապետին ձեռքով պատերազմեցաւ նոցա դէմ, մինչև Հրէաստանէն դուրս վճնաց զանոնք և Ալուսազէմ քաղաքին տիրեց:

— Սբեշ Բնչ ըրաւ Տիգրան և սրշափ թագաւորեց:

74. Տիգրան Պարսից Արշէզ թագաւորին հետ ալ միանալով պատերազմեցաւ Հռովմայեցւոց Արասոս զօրավարին դէմ, յաղթեց զօրացը՝ և զինքն ալ սպաննեց, և 54 տարի թագաւորելէն յետոյ մեռաւ:

ԱՐՏԱՒԱԶԴ Ա. 3 տ.

բ. Ա. 35—32

— Ո՛ր էր Տիգրան Բ-ի յաջորդը:

75. Տիգրանայ յաջորդեց իւր Արտաւազդ Ա. որդին. ասի կերուխումն ու զբօսանքը շատ կը սիրէր, և իւր հօրը նման քաջ ու հզօր չէր:

— Ալ տաւազդ ինչպէս մեռաւ:

76. Հռովմայեցիք Հայոց շատ երկիրներուն տիրեցին. Արտաւազդն ալ խարդախու թեամբ

բռնեցին, և ոսկի շղթայի զարնելով Ազիպտոս զերի տարին ու հոն գլուխը կտրեցին:

ԱՐԱՄ 29 տարի

բ. Ա. 32—3

— Ո՛ր էր Արամ և ինչ ըրաւ:

77. Արտաւազդայ մեռնելէն յետոյ, Տիգրանայ եղբորորդին՝ Արամ՝ շատ զօրք ժողկեց, Հայաստանի մէջ եղող Հռովմայեցիներն սպաննեց և Հայոց թագաւոր եղաւ:

— Արամ ինչն հարկատու եղաւ Հռովմայեցւոց:

78. Արամ վախցաւ Հռովմայեցւոց Օգոստոս կայսրէն և նորա սիրան ամենչաւ համար՝ խոստացաւ որ ամեն տարի տուրք տայ Հռովմայեցւոց: Արամէն ետքը Հայոց բոլոր թագաւորները Հռովմայեցւոց հարկատու եղան և Հայոց Աղաա թագաւորութիւնը վերցաւ:

ՀԱՐԿԱՏՈՒ ԹԱՅԱՌՈՐՈՒԹԻՒՆ

Ա Բ Գ Ա Բ 38 տարի,

Բ. Ա. 3 Գրիստոսէ Էպոք 35

— Ո՛ր էր Աբգար և ինչ երևելի դէպք պատահեցաւ ասոր թագաւորութեան երրորդ տարին:

79. Արշամ 29 տարի թագաւորելէ յետոյ մեռնելով՝ իրեն յաջորդեց որդին Աբգար. ասոր թագաւորութեան երրորդ տարին Յիսուս Քրիստոս ծնաւ Հրէաստանի մէջ, Իէթլէհէմ գիւղը:

— Աբգար ինչպէս թագաւորեց:

80. Աբգար ազնիւ և խմաստուն թագաւոր մ'եղաւ. Հայաստանը ծագիկեցուց, Հայոց թըշնամիներուն դէմ պատերազմ բռաւ, յաղթեց ու վռնտեց զանոնք, յետոյ Հոռովմ գնաց և հոն՝ Օգոստոս կայսեր շատ սիրելի եղաւ:

— Աբգար ինչո՞ւ Պարսկաստան գնաց և հոն ինչ եղաւ իրեն:

81. Պարսից թագաւորին տղայքը խռովեր էին մէկ մէկու հետ. Աբգար Պարսկաստան գնաց որ զտնոնք խաղաղեցնէ և հոն վրան բռնրոտութիւն եկաւ:

— Աբգար բժշկուելու համար որու աղաչեց:

82. Աբգար երբոր Հայաստան դարձաւ, լսեց որ Քրիստոս Արուսաղէմի մէջ մեծամեծ հրաշքներ կը գործէ. մարդ խրկեց և աղաչեց Քրիստոսի որ Հայաստան գայ և զինքը բժշկէ. բայց Քրիստոս չեկաւ, խոստացաւ որ իւր համբառնայէն յետոյ մարդ զրկելով կը բժշկէ զինքը:

— Քրիստոսի համբառնայէն յետոյ որ առաքեալներն Հայաստան եկան և ինչ ըրին:

83. Քրիստոսի երկինք համբառնայէն յետոյ՝ Թադէոս և Քարթողիմէոս առաքեալներն Հայաստան եկան. Աբգարը բժշկեցին, սուրբ Աւետարանը Հայաստանի մէջ քարոզեցին, և Հայերը մկրտելով քրիստոնեայ ըրին:

— Աբգար որչափ թագաւորեց:

84. Աբգար քրիստոնեայ ըլլայէն յետոյ երեք տարի ալ ապրեցաւ և 38 տարի թագաւորելէն յետոյ սրբութեամբ մեռաւ:

Ա Ն Ա Ն Է ԵՆ Ս Ա Ն Ա Տ Ի Ո Ւ Կ 30 տարի

Բ. Ե. 35—65

— Ո՛ր էին Անանէ և Սանատրուկ և ինչ ըրին:

85. Աբգարէն յետոյ եկող թագաւորներն ե-

ղան՝ Անանէ և Սանատրուկ. ասոնք Հայոց նախարարներուն հետ միանալով քրիստոնէութիւնը ուրացան, նորէն կռապաշտ եղան և շատ մարդիկ ալ մեռցուցին քրիստոնեայ ըլլալուն համար:

— Սանատրուկի ինչպէս բոլոր Հայոց թագաւորեց:

86. Անանէ Հայոց մէկ մասին կիշխելը, Սանատրուկ ալ միւս մասին, բայց Անանէ 4 տարի թագաւորելէն ետք որ մը իւր շինել տուած պալատին մէջ զխուս վրայ սիւն մը ինկաւ և զինքը սպաննեց. Սանատրուկ անմիջապէս Անանէի երկկրներուն ալ տիրեց և բոլոր Հայոց թագաւոր եղաւ:

— Սանատրուկ իւր Սանդուխտ աղջիկն և Քաղէս առարեալը ինչո՞ւ սպաննեց:

87. Սանատրուկ իւր Սանդուխտ աղջիկը մեռցրնել տուաւ. վասն զի Սանդուխտ քրիստոնեայ էր և կռապաշտութիւնը չէր ընդունէր. Սանատրուկ այս պատճառաւ սպաննել տուաւ նաև թագէոս առարեալը:

— Հայերն ինչո՞ւ վերտոխն կռապաշտութեան դարձան:

88. Հայոց ժողովուրդը երբ այս բռնութիւնները տեսաւ՝ մեծ մասը օտակարով նորէն կռապաշտ եղաւ, և Հայաստանի մէջ միոյն քանի մը խեղճ քրիստոնեայներ մնացին:

Ե Ր Ո Ւ Ա Ն Գ 20 տարի

Գ. Ե. 65—83

— Սանատրուկի մեռնելէն յետոյ ի՞նչ եղաւ:

89. Սանատրուկի մեռնելէն յետոյ Արուանդ անունով իշխան մը՝ Սանատրուկին բոլոր զաւակները մեռցրնել տուաւ և ինք թագաւորեց Հայոց վրայ:

— Այս կոտորածէն որո՞նք ազատեցան:

90. Այս կոտորածէն միայն Սանատրուկի պղտիկ որդին Արտաշէս ազատեցաւ. Բազրատունի Սմբատ իշխանը այս տղան Արուանդին ձեռքէն փախցուց, և Պարսից թագաւորին տաւրաւ:

— Երուանդ ինքզինքը պաշտպանելու համար ի՞նչ ըրաւ:

91. Արտաշէս Սմբատայ հետ Պարսից երկիրը մնաց մինչև որ մեծցաւ. Արուանդ ջանք ըրաւ որ զԱրտաշէս սպաննել տայ, բայց չը յաջողեցաւ. ուստի շատ զօրք ժողովեց որ ինքզինքը պաշտպանէ:

— Պարսից թագաւորն ի՞նչ ըրաւ Արտաշէսի:

92. Պարսից թագաւորը Սմբատայ հետ շատ

զօրքով Հայաստան զրկեց Արտաշէսը՝ որ երթայ թագաւոր ըլլայ. Արտաշէս ալ եկաւ խիստ մեծ պատերազմ մ'ըրաւ Արուանդայ դէմ:

— Արտաշէս ինչպէս թագաւոր պսակուեցաւ.

93. Պատերազմին ժամանակը Հայոց քաջ զօրքերն Արտաշիսի կողմն անցան. Արուանդ յաղթուեցաւ և սպաննուեցաւ 20 տարի թագաւորելէն յետոյ. Արտաշէս ոչ թագաւոր պսակուեցաւ Հայոց վրայ:

Ա Ր Տ Ա Շ Է Ս Բ. 42 ա.

բ. Ե. 85—127

— Արտաշէս Բ. ինչպէս թագաւորութիւն ըրաւ:

94. Արտաշէս Բ. քաջ և բարի թագաւոր մ'եղաւ, իրեն աղէկութիւն ընողներուն շատ պատիւներ տուաւ, Հայաստանի մէջ ամեն տեղ երկրագործութիւնն ու արուեստները ծաղկեցուց, և զՀայերը երջանիկ ազգ մ'ըրաւ:

— Արտաշէս ինչ ըրաւ Ալանաց դէմ:

95. Ալանք ըսուած ազգին թագաւորը՝ շատ զօրքով Հայաստան յարձակեր էր. Արտաշէս Բ. իրեն բարեկամ Սմբատ զօրավարին օգնու-

թեամբը յաղթեց նմա, յետոյ հետը հաշտութիւն ըրաւ, և նորա Սաթիինիկ անուն աղջիկը կին առաւ իրեն:

— Ո՞ր էր Արտաւազդ և ինչ շարք ըրաւ:

96. Արտաշէսի անդրանիկ որդին՝ Արտաւազդ՝ չարութեամբ նախանձեցաւ Սմբատայ և ուրիշ քանի մը մեծ նախարարաց վրայ, և անոնցմէ շատերն անգթաբար սպաննել տուաւ:

— Արշափ թագաւորեց Արտաշէս Բ.

97. Արտաշէս Բ. 42 տարի թագաւորեց ու մեռաւ. բարի թագաւոր մ'ըլլալուն Հայերը կը սիրէին զինքը. շատ մարդիկ նորա դերեզմանին վրայ յուսահատութեամբ ինքզինքնին սպաննեցին:

Արտաշիսի յաջորդները 86 ա.

բ. Ե. 127—213

— Արտաւազդ Բ. ինչպէս թագաւորեց և ինչպէս մեռաւ:

98. Արտաշիսի յաջորդեց իւր Արտաւազդ Բ. որդին, որ բարկացոտ և չարասիրտ ըլլալուն՝ Հայք չսիրեցին զինքը. ասիկա օր մը ձի հեծաւ և լեռը պտրտելու ատեն՝ խոր փոսի մի մէջ ընկաւ ու խեղդուեցաւ. 2 տարի թագաւորեց:

— Արտաւազդ Բ-ի որոնք յաջորդեցին:

99. Արտաւազդ Բ-էն յետոյ մէկ մէկու ետեւեւ շայոց թագաւոր եղան իւր եղբայրները Տիրան Ա. 22 տարի և Տիրան Գ. 42 տ. Տիրանին ալ յաջորդեց իւր որդին Աղարշ որ 20 տարի թագաւորեց:

— Աղարշ որոնց դէմ պատերազմեցաւ:

100. շիւսիսային լեռնցի և վայրենի ազգերը շատ զօրքով շայաստան յարձակեր էին, Աղարշ շայոց զօրքերով դէմերնին ելաւ, հետերնին պատերազմեցաւ և փախցուց. բայց ինքն ալ զարնուեցաւ և մեռաւ: Աղարշ շայրենաւոր կոչուեցաւ:

ՄԵԾՆ ԽՈՍՐՈՎ Ա. 48 տ.

բ. ե. 213—261

— Ո՛վ էր Խոսրով Ա.:

101. Աղարշէն յետոյ Խոսրով Ա. իւր հօրը տեղը շայոց թագաւոր եղաւ. շատ զօրք ժողովեց, և Տիւսիսային վայրենեաց դէմ պատերազմելով իւր հօրը մահուան վրէժը լուծեց և իւր իշխանութեան ներքև առաւ զանոնք:

— Խոսրովի ատեն Պարսից թագաւորն ո՛վ էր և ի՞նչ եղաւ:

102. Խոսրով բարեկամ և ազգական էր Պարսից Արտաւան թագաւորին. քանզի երկուքն ալ Արշակունի էին. բայց Պարսից նախարարներէն Արտաշէր Սասանեան անուռն մէկը Արտաւանն սպաննեց և ինքն եղաւ թագաւոր:

— Խոսրով ի՞նչ ըրաւ Արտաշէրի դէմ:

103. Խոսրով պատերազմի ելաւ Արտաշէրի դէմ, տասն տարի պատերազմեցաւ հետը և մինչև շնդկաստան ըսուած երկիրը փախցուց զինքը:

— Արտաշէր ի՞նչ խարդախութիւն մտածեց Խոսրովի համար:

104. Արտաշէր իւր նախարարաց հետ խորհուրդ ընելով Անակ իշխանը շայաստան զրկեց, որ երթայ խարդախութեամբ սպաննէ զԽոսրով:

— Ո՛վ էր Անակ և ի՞նչ ըրաւ:

105. Անակ Խոսրովի ազգականն էր. եկաւ շայաստան, երկու տարի կեցաւ և օր մը՝ որսի ատեն Խոսրովի վրայ վազեց և դանակով զարկաւ զնա. բայց ինքն ալ փախչելու ատեն՝ գետն ինկաւ ու խեղդուեցաւ:

— Անակայ ընտանիքն ի՞նչ եղան:

106. Խոսրով 48 տարի թագաւորելէն յետոյ՝ այսպէսով սպաննուեցաւ: Անակայ բոլորը

ընտանիքը Ջարդուեցան, միայն իւր մէկ տղան
ազատեցաւ. այս տղուն անունն էր Գրիգոր՝ որ
յետոյ մեր ազգին Առսաւորիչն եղաւ:

Պարսիկք Ի Հայաստան 26 տ.

Ք. Ե. 261—287

— Խոսրովի ընտանիքն ի՞նչ եղան:

107. Արտաշէր Խոսրովի մահը լսելուն պէս՝
Պարսից զորքով եկաւ Հայաստանի տիրեց, և
Խոսրովի բոլոր ընտանիքը թրէ անցուց:

— Խոսրովի ո՞ր զաւակներն ազատեցան:

108. Խոսրովի երկու պղտիկ զաւակներն ա-
զատեցան Արտաշէրի ձեռքէն. ասոնցմէ մէկն էր
մանչ մը Տրդատ անուն, միւսն ալ աղջիկ մը
Խոսրովիդուխտ անուն:

— Տրդատ Բնչպէս կրցաւ թաղաւոր ըլլալ Հայոց:

109. Տրդատ Հռովմ քաղքին մէջ մեծ-
ցաւ, զարմանալի քաջութիւններով Հռովմա-
յեցոց սիրելի եղաւ, և 26 տարի յետոյ Հա-
յաստան գալով Պարսիկները վճնտեց և ինք
Թաղաւորեց Հայոց վրայ:

Մ Ե Ծ Ն Տ Ր Դ Ա Տ 56 տ.

Ք. Ե. 287—343

— Տրդատ որո՞ց դէմ հալածանք հանեց:

110. Տրդատ հալածանք հանեց Հայաստա-
նի մէջ եղող բոլոր քրիստոնէից դէմ և շատ
չարչարեց զանոնք. Անակայ որդին Գրիգորն ալ
տանջեց և ստիպեց որ քրիստոնէութիւնը թո-
ղու, կռապաշտ ըլլայ:

— Տրդատ Բնչո՞ւ գրիգորը խոր վերապի մէջ նետել տուաւ:

111. Տրդատ երբ լսեց որ Գրիգոր իւր
Խոսրով հայրն սպաննող Անակայ որդին է,
խոր վերապի մը մէջ նետել տուաւ:

— Ո՞չ էր Հռիփսիմէ և ի՞նչ եղաւ:

112. Հռովմ քաղքէն քանի մը քրիստոնե-
այ աղջիկներ Հայաստան փախեր էին. անոնց-
մէ մէկն էր Ս. Հռիփսիմէ կոյսը. Տրդատ ու-
ղեց որ Ս. Հռիփսիմէ քրիստոնէութիւնը թո-
ղու և իրեն կին ըլլայ. երբ Հռիփսիմէ յանձն
չառաւ, Տրդատ անողորմաբար սպաննեց զինքն
ու ընկերները:

— Հովհաննէս մեռնելէն յետոյ ինչ եղաւ:

113. Հովհաննէս մեռնելէն յետոյ՝ Տրդատ խնամեցածի պէս լեռները փախաւ. այն Խոսրովեղուխա՝ Տրդատայ քոյրը՝ լսելով որ Ս. Գրիգոր այն վերապին մէջ 14 տարիէ ՚ի վեր ողջ է, մարդ զրկեց ու հանել տուաւ:

— Ս. Գրիգոր ինչո՞ւ Լուսաւորիչ կոչուեցաւ:

114. Ս. Գրիգոր Տրդատն ու բոլոր Հայերը քրիստոնեայ ըրաւ ու մկրտեց Քրիստոսէ 303 տարի յետոյ, և Հայաստանեայց Ս. Եկեղեցին հաստատելով Լուսաւորիչ կոչուեցաւ:

— Ս. Եջմիածին վանքն ո՞վ շինեց:

115. Ս. Գրիգոր Տրդատայ օգնութեամբ Ս. Եջմիածին վանքը շինեց Աղաղաբապատ քաղաքին մօտ. այս վանքը մինչև հիմա կը կենայ և հոն կը նստի Հայոց ընդհանրական Աթուղեկոսը՝ որ Ս. Լուսաւորիչ յաջորդն է:

— Տրդատ քրիստոնէութիւնը տարածելու համար ինչէ՞ր ըրաւ:

116. Տրդատ Հայոց բուրմերէն շատերը ջարդեց քրիստոնեայ չըլլալուն համար. նաև Ս. Գրիգորի խորհրդով Հայաստանի մէջ զրտնուած բոլոր հեթանոսական գրքերը այրել տուաւ:

— Ո՞վ է Մեծն Արտանդիանոս և ինչ ըրաւ:

117. Տրդատայ ժամանակ Հռովմայեցոց

կայսր եղաւ Մեծն Արտանդիանոս. ասիկա Տիւղանդիոն անուն քաղաքը նորոգեց ու մեծցուց և աթոռը Հռովմէն հոն փոխադրեց, քաղաքին անունն ալ փոխեց ու Արտանդնուպոլիս դրաւ:

— Տրդատ ինչո՞ւ բարեկամացաւ Արտանդիանոսի հետ:

118. Տրդատ բարեկամ եղաւ Արտանդիանոսի հետ, որովհետև Արտանդիանոս քրիստոնեայ եղեր էր:

— Տրդատ որո՞ց դէմ պատերազմեցաւ:

119. Տրդատ մեծամեծ պատերազմներ ըրաւ Պարսից Շապուհ Թագաւորին դէմ, որ Երտաշի որդին էր. և շատ երկիրներ ձեռքէն առաւ. նոյնպէս հիւսիսային լեռնցիներուն դէմ պատերազմեցաւ շատ անգամ, և թուրքի մէկ հարուածով անոնց Գեղուհոն Թագաւորը ձիովը մէկտեղ երկու կտոր ըրաւ:

— Տրդատ ինչ համար ունեցաւ:

120. Տրդատայ զարմանալի քաջութիւններն և անպարտելի ուժը լսելով՝ Հայոց շրջակայ ազգերը դողալ սկսան իւր անունէն, և ալ Հայաստան չարչաւեցին:

— Հայոց նախարարներն ինչո՞ւ Տրդատայ հետ թշնամացան:

121. Տրդատ միշտ կը համոզէր Հայոց նաև

խարարները, որ բարի և առաքինի կեանք ունենան, ժողովուրդը չը չարչրեն և իրեն հետ միաբան մնան. բայց նոքա չար մարդիկ ըլլալով մեռցընել ուզեցին զՏրդատ:

— Տրդատ ինչպէս մեռաւ:

122. Տրդատ տեսնելով որ նախարարք միշտ գէշութիւն կը գործեն, թագաւորութիւնը ձգեց լեռը քաշուեցաւ. այն ատեն նախարարք ալ թոյն տուին և սպաննեցին զինքը. 56 տարի թագաւորեց և 85 տարի ապրեցաւ:

— Հաւատոյ հանդանակն ո՞ր գրուեցաւ:

123. Տրդատ չը մեռած Նիկիա ըսուած քաղաքին մէջ քրիստոնէից ժողով մ'եղաւ. հոն գրուեցաւ Հաւատոյ հանգանակ ըսուածն, որ է Հաւատքս մի մի Աստուծոյ . . . և այլն:

— Հանգանակն ո՞վ Հայաստան բերաւ: Ինչպէս մեռաւ Ս. Գրիգոր:

124. Ս. Գրիգոր Լուսաւորչի պղտիկ որդին՝ Արիստակէս հայրապետն Հանգանակը Հայաստան բերաւ: Տրդատայ մեռնելէն առաջ Ս. Գրիգոր Լուսաւորչի այրի մը մէջ ձգնութիւն ընելու ատեն մեռաւ:

ԽՈՍՐՈՎ Բ. 10 տ. ՏԻՐԱՆ Բ. 11 տ.

Բ. Ե. 343—364

— Ս. Լուսաւորչի մեռնելէն յետոյ Հայաստան ինչ եղաւ:

125. Ս. Լուսաւորչի մեռնելէն յետոյ, Հայոց կաթողիկոս եղած էր Ս. Արիստակէս, անորորմ նախարարներն սպաննեցին զնա և շատ զօրք ժողովելով սկսան մէկ մէկու դէմ սպառնալով ու անխնայ մարդ ջարդել:

— Տրդատայ որո՞նք յաջորդեցին:

126. Ս. Գրիգոր Լուսաւորչի մեծ որդին՝ Վրթանէս Հայրապետ՝ խելացի նախարարաց հետ միանալով՝ Տրդատայ որդին խոստով Բ. Ս. Հայոց թագաւոր զնել տուաւ. ասիկայ 10 տարի թագաւորելով մեռաւ. իրեն յաջորդեց իր որդին Տիրան Բ. 11 տարի:

— Խոստով Բ. և Տիրան Բ. ատեն Պարսիկք ինչ ըրին Հայոց:

127. Այս երկու թագաւորները տկար ու թոյլ մարդիկ եղան. Պարսիկք ալ սկսան համարձակ թշնամութիւն ընել Հայոց. Տիրան Պարսից Շապուհ թագաւորէն վախնալով աւերակ նոր հետ հաշտութիւն ըրաւ:

— Տիրան Բնչ շարիք գործեց և Բնչ Բնչ եղաւ:

128. Տիրան ծեծելով մեռցուց Ս. Յուսիկ Վաթողիկոսը, Շապուհի դէմ ալ խարդախութիւն ըրաւ. Շապուհ ալ զինքը խաբէութեամբ Պարսկաստան կանչեց ու հոն աչքերը հանել տուաւ:

ԱՐՇԱԿ Բ. 18 տ.

Ֆ. Ե. 364—382

— Ո՞վ եղաւ Տիրան Բ.ի յաջորդը:

127. Արշակ Բ. յաջորդեց իւր Տիրան հօրը, ասիկա իւր անխելքութեամբը շատ անկարգութիւններ ըրաւ, շատ անմեղ մարդիկ սպանեց. նաև իր Տիրան հայրը խեղդել տուաւ, թէ Յունաց և թէ Պարսից հետ թշնամի եղաւ և թշուառացուց զՀայաստան:

— Արշակ Բ.ի ասեւր ո՞վ երևել էր եղաւ:

128. Արշակայ ժամանակ երևելիեղաւ Մեծն Ներսէս Վաթուղիկոս՝ Հայաստանի անմահ բարերարը. ասիկա Ս. Գրիգոր Լուսաւորչին թուռան որդին էր. շատ հիւանդանոցներ, որբանոցներ և վարժարաններ շինեց. ժողովրդեան

զաւակները ժողկելով ուսմամբ և զիտութեամբ կրթել կու տար:

— Ս. Ներսէս Բնչ նեղութիւն կրեց Արշակայ պատճառաւ:

131. Արշակ իւր տկարութեանը չը նայելով՝ շատ անգամ կ'ուզէր ապստամբիլ Յունաց կայսրէն: Ս. Ներսէս ալ Պօլիս երթալով կայսեր բարկութիւնը կ'ինջեցընէր. բայց Վաղէս անուն կայսրը հերետիկոս ըլլալուն՝ Ս. Ներսէսը հեռու տեղ մը արտօրեց:

— Արշակ Բ. Բնչ քաղաք շինեց:

132. Արշակ քաղաք մը շինեց և անունը դրաւ Արշակաւան. հրաման ըրաւ որ ամեն չարագործ մարդիկ հոն փախչին ու ազատին. անմիջապէս շատերն սկսան մէկգմէկ մեռցընել, ուրիշն ունեցածն յափշտակել և Արշակաւան փախչիլ. նախարարները միացան դաջին Արշակաւանը կործանեցին և մէջի բնակիչներն սպանեցին:

— Ս. Ներսէս Բնչ բարիք ըրաւ Արշակաւանի մանկանց:

133. Ս. Ներսէս Արշակաւանի մէջ գտնուող մանր տղայքն ազատեց, սնոց զանոնք, դպրոցներ բացաւ և կրթութիւն տուաւ անոնց:

— Արշակ Բնչպէս բնտարկուեցաւ:

134. Նախարարք Արշակայ ըրածներուն չը

դիմանալով Պարսից Շապուհ թագաւորին մատնեցին զինքը. Շապուհ ալ բռնեց զինքը և Անյուշ ըսուած բերդը գրաւ :

— Ո՞վ էին Մեհրուժան Արծրունի և Վահան Մամիկոնեան :

135. Արշակայ բռնուելէն յետոյ՝ Մեհրուժան Արծրունի և Վահան Մամիկոնեան՝ երկու չարագործ նախարարներ՝ կռապաշտ եղան. Պարսից թագաւորէն շատ զօրք առին և արիւնծով ու կրակով աւերեցին զձայաստան, շատ գրքեր այրեցին, Արշակայ Փառանձեմ անուն կինն ալ սպաննեցին :

— Արշակ է՞նչպէս մեռաւ :

136. Արշակ Անյուշ բերդին մէջ այս և զաճները լսելով՝ յուսահատութենէն ինքզինքը գանակով զարկաւ սպաննեց, 18 տարի թագաւորելէն յետոյ :

ՊԱՊ 9 տ. ՎԱՐԱՋԴԱՏ 1 տ.

բ. Ե. 382—392

— Արշակ Բ. էն յետոյ է՞նչ եղաւ :

137. Յունաց թէոդոս կայսրը՝ Արշակայ Պապ անուն որդին շատ զօրքով ձայաստան

ղրկեց Ս. Ներսէսի հետ, որպէս զի երթայ Պարսիկներն ձայաստանէն վռնտէ, և ինքը թագաւոր ըլլայ :

— Մեհրուժան է՞նչպէս սատկեցաւ :

138. Պապ ձայոց և Յունաց զօրք խիստ մեծ պատերազմ մ'ըրաւ Պարսից և անոնց դաշնակից ազգերուն դէմ. այս պատերազմին մէջ Պապ յաղթեց և Մեհրուժան սատկեցաւ :

— Ս. Ներսէս է՞նչպէս մեռաւ :

139. Պապ ձայոց վրայ թագաւոր եղաւ, բայց մոլի և վատասիրտ ըլլալուն՝ քիչ ատենէն սկսաւ գէշութիւններ ընել. սոսկալի անգթութեամբ զՍ. Ներսէսը թունաւորելով մեռցուց : որովհետեւ Ս. Ներսէս զինքը կը խրատէր ու կը յանդիմանէր գործած չարիքներուն համար :

— Պապ է՞նչպէս սպանուեցաւ և ո՞վ յաջորդեց երեսն :

140. Պապ Յոյներէն ապստամբեցաւ, թէոդոս կայսրն ալ զինքը Պօլես կանչեց զյուսը կտրել տուաւ՝ 9 տարի թագաւորելէ յետոյ, և տեղը թագաւոր զրաւ Վարազդատ անուն Արշակունի իշխանը :

— Վարազդատ է՞նչո՞ւ արտորուեցաւ :

141. ձայաստանի մէջ Յոյն զօրապետներ կային. ասոնք կ'ուզէին որ Վարազդատայ վրայ

իշխեն. Սարազղատ Ս. Պօլիս քնաց որ անոնց բրածին դէմ բողբէ Վայսեր առջև, բայց Վայսըրը առանց դատաստան տեսներու՝ անիրաւութեամբ արքորեց զՍարազղատ՝ տարի մը թագաւորելէ յետոյ:

Վարագրատայ յաջորդները 8 ու.

բ. Ե. 392—400

— Վարագրատայ որոնք յաջորդեցին:

142. Սարազղատէն յետոյ Թէոդոս Հայոց վրայ երկու թագաւոր դրաւ, որպէս զի միշտ իրարու դէմ պատերազմելով տկարանան և իրմէ չսպստամբին: Այս թագաւորներն եղան Պապին որդիքը՝ Արշակ Գ. և Վաղարշակ Բ. բայց Վաղարշակ մէկ տարիէն մեռաւ:

— Հայաստան ինչպէս բաժնուեցաւ Յունաց և Պարսից մէջ:

143. Քիչ ատենէն Յոյնք և Պարսիկք մէջերնին բաժնեցին զՀայաստան, անանկ որ Հայաստանի Արեւմտեան մասն Յունաց, իսկ Արեւելեան մասն Պարսից հարկատու մնացին:

— Արշակ Գ. ինչպէս մեռաւ:

144. Արշակ Գ. Յունաց մասին թագաւոր եղաւ, Պարսից մասին ալ Խոսրով Գ. արշա-

կունի իշխանը. ասոնք սաստիկ պատերազմ բռնին մէկ մէկու դէմ, և Արշակ Գ. յաղթուելով հիւանդացաւ ու մեռաւ 4 տարի թագաւորելէ յետոյ:

— Խոսրով Գ. ինչո՞ւ բանտարկուեցաւ և ո՞վ յաջորդեց իրեն:

145. Խոսրով Գ. բոլոր Հայաստանի վրայ տիրեց. բայց նախարարը վրան նախանձելով՝ Պարսից թագաւորն իրեն դէմ զրգռեցին. նա ալ զինքը բռնեց Անյուշ բերդին մէջ բանտարկեց՝ 3 տարի թագաւորելէ յետոյ, և տեղը թագաւոր դրաւ անոր Վառձապուհ եղբայրը:

Վ. Ռ. Ա. Մ. Շ. Ա. Պ. Ռ. Է. 21 ու.

բ. Ե. 400—424

— Վառձապուհի ատեն որոնք երևելի եղան:

146. Վառձապուհ բարի և ուսումնասէր թագաւոր մ'եղաւ. ասոր ատենը Հայաստանի մէջ երևելի եղան՝ Ս. Սահակ Պարթև կաթողիկոսն և Ս. Մեսրոպ գիտնական վարդապետը:

— Հայոց գրերն ո՞վ գտաւ:

147. Արտուի թէ Հայերը մինչև այն ատեն իրենց յատուկ գիր չունէին. Մեսրոպ վարդա-

պետ շատ աշխատելէ յետոյ՝ հրաշք գտաւ Հայոց 36 գրերը ահն մինչև փ, որոնք ՍԵԿՐԵՏԻՆԻԱՆ աստուծոյ կոչուեցան :

— Վ. Առաջապուհին Ի՞նչ երևելի գործ ըրաւ :

148. Ս. ՍԵԿՐԵՏԻՆԻԱՆ և Ս. ՍԱՀԱԿԻԱՆ ԽՈՐՀՐԴՈՎ Վ. Առաջապուհին շուտ մը Հայաստանի ամեն կողմը դպրոցներ բացաւ, ազգին զաւակները կրթել տուաւ. քանի մը տղայ ալ օտար երկիրներ, մանաւանդ Յունաստան, զրկեց՝ ուսումն ու գիտութիւն սովորելու համար :

— Այս ժամանակ նշանաւոր մարդիկ որոնք եղան :

149. Այս տղոցմէ շատերը՝ երբոր մեծցան՝ երևելի մարդիկ եղան. Ինչպէս են Ազնիկ, Արրիւն, Աղեղէ, Ղազար Փարպեցի, և ուրիշներ. ասոնք շատ գրքեր գրեցին և թարգմանեցին, Հայոց լեզուն ծաղկեցուցին. ուստի անոնց ժամանակը կը կոչուի, Ոսկեդար գրականութեան Հայոց :

Վրաստանի յաջորդները 12 ու.

բ. Ե. 421—433

— Վ. Առաջապուհին որոնք յաջորդեցին :

150. Վ. Առաջապուհին 21 տարիէն երբոր մե-

տաւ, Հայոց նախարարները մէկ մէկու հետ անմիաբան ըլլալով՝ թող տուին որ Պարսիկք ու զաճնին ընեն. անոնք ալ Խոսրով Գ. Սնյուշ բերդէն հանելով թագաւոր դրին. երբոր նա մէկ տարիէն մեռաւ, Պարսից թագաւորն իւր Հապուհ որդին Հայոց վրայ թագաւոր պսակեց :

— Հապուհին ո՞վ յաջորդեց :

151. Հապուհ Հայոց նախարարներէն ծանր նախատիք կրելուն համար թագաւորութիւնը ձգեց 5 տարի յետոյ. այն ատեն Պարսիկք Վ. Առաջապուհին Արտաշէս Գ. անուն 18 տարեկան տղան Հայոց վրայ թագաւոր դրին.

— Արտաշէս Գ. ի ատեն նախարարներն Ի՞նչ ըրին :

152. Արտաշէս Գ. խնամով տղայ մ'էր. Հայոց նախարարները փոխանակ Հայաստանի աղէկութիւնը մտածելու, ամենը մէկէն Պարսից թագաւորին գնացին, և աղաչեցին որ Հայոց թագաւորութիւնը կործանէ :

— Պարսից թագաւորն Ի՞նչ ըրաւ Հայ նախարարաց :

153. Հայաստան արդէն տկարացերէր. Պարսից թագաւորն ալ կ'ուզէր որ կամաց կամաց Հայերը կրակապաշտ ընէ. քանզի Պարսիկք կրակապաշտ էին, այսինքն արեւն ու կրակը իբր

Մատուցած կը պաշտէին. ուստի մատնիչ նախա-
բարները Հայաստան զրկեց մեծ պատիւներ տա-
լով անոնց:

— Ս. Սահակ Ինչպէս դեմ կեցաւ նախարարաց այս Ինչդոյն:

154. Ս. Սահակ շատ աղաչեց նախարարաց
որ այս սոսկալի աղէտը չը բերին Հայաստանի
վրայ, և իմացուց որ Պարսիկք Հայոց թագա-
ւորութիւնը ջնջելէ յետոյ՝ Հայոց Ս. Կրօնքը
և Ազգութիւնն ալ ջնջելու պիտի աշխատին:

— Արշակունեաց Իշխանութիւնը ճշգրտ գիմացաւ և Ինչպէս
կործանեցաւ:

155. Անմիտ նախարարներն այս խօսքերը
բանի տեղ չը դրին, այլ պարսից թագաւորին
հաճելի ըլլալու համար Ս. Սահակն ալ ամբաս-
տանեցին. Պարսից թագաւորն ալ զինքը կա-
թողիկոսութենէ, ձգելով՝ Պարսկաստանի մէջ ար-
գիլեց, իսկ Արտաշէսը հեռաւոր երկիր մ'արտո-
րեց 6 տարի թագաւորելէն յետոյ:

Այսպէսով կործանեցաւ Արշակունեաց թա-
գաւորութիւնը՝ Վրիստոսի 433 թուականին,
580 տարի զիմանալէ յետոյ:

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՄԱՐԶՊԱՆԱՑ ԵՒ ՈՍՏԻԿԱՆԱՑ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

—

Մեր ազգին պատմութեան այս երրորդ մասն
երկու գլխաւոր ժամանակներու կը բաժնուի, որք
են

Ե. Մարզպանաց Իշխանութիւն:

Բ. Ոստիկանաց Իշխանութիւն:

—

ՄԱՐԶՊԱՆԱՑ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

ԱԵԿՄԻԿԻՆԱՊՈՒԷ 14 տարի

Բ. Ե. 434—448

— Արշակունեաց կործանելէն յետոյ Ինչ եղաւ Հայաստան:

156. Արշակունեաց թագաւորութիւնը տկա-
րացաւ Հայոց տգիտութեան և անմիաբանու-
թեան պատճառաւ, և նախարարները բոլորովին
կործանեցին զայն. այն ատեն Պարսից թագա-
ւորն Հայաստանի տիրելով՝ իր կողմէն Մարզ-

պան կոչուած իշխան մը կը զոկեր Հայաստան
որ կը կառավարեր զՀայոս և տուրք կը ժողովէր:

— Ո՛վ եղաւ առաջին մարզպան:

157. Առաջին մարզպան եղաւ Աբհմիհրջաւ
պուհ անուն Պարսիկ իշխանը 14 տարի:

— Պարսից Յազկերտ Բ. Թագաւորն Հայոց համար ի՞նչ միտք
ունեցաւ:

158. Պարսից Յազկերտ Բ. Թագաւորը միտք
ըրաւ որ Հայոց քրիստոնէութիւնը ջնջէ,
և զամենքն ալ կրակապաշտ ու արեւապաշտ ր-
նէ. վասն զի Պարսիկք կրակն ու արևն Աստու-
ծոյ տեղ կը պաշտէին:

— Յազկերտ երկրորդ իւր նպատակին հասնելու համար ի՞նչ
ըրաւ:

159. Յազկերտ իւր չար նպատակին հասնե-
լու համար՝ Հայոց Ասասկ Սիւնի իշխանին
շատ պատիւներ տուաւ և Վեհմիհրջապուհի մեռ-
նելէն յետոյ զինքն Հայոց վրայ մարզպան զրաւ:

Վ Ա Ս Ա Կ Ս Ի Ի Ն Ի 4 տ.

Բ. Ե. 448—452

— Վասակ Սիւնի ի՞նչ ըրաւ:

160. Վասակ Սիւնի մարզպան ըլլալէ յետ-

տոյ՝ սկսաւ աշխատիլ որ բոլոր Հայերը կրակա-
պաշտ ընէ, և Պարսից Թագաւորին աչքը մշտ-
նելով Հայոց Թագաւոր պսակուի:

— Ո՛վ էր Մեծն Վարդան Մամիկոնեան:

161. Վասակայ ատեն, Հայաստանի մէջ
երեւելի եղաւ Մեծն Վարդան Մամիկոնեան նա-
խարարը՝ որ Ս. Սահակայ Թոռն էր. ասիկա
բոլոր Հայոց առաջնորդ եղաւ որ քրիստոնէու-
թիւնը չթողուն:

— Յազկերտ Բ. ինչո՞ւ Հայոց նախարարները բանտարկեց:

162. Յազկերտ Բ. Հայոց նախարարները
ի Պարսկաստան կանչեց ու բանտարկեց, որպէս
զի հաւատքնին ուրանան. նախարարները առ-
երեսա Յազկերտի կամքը կատարեցին. բայց
երբ Հայաստան դարձան, Յովսէփ կաթողի-
կոսին և Ղևոնդ երէցին առջև զղջացին:

— Յազկերտ Հայոց դիմադրութիւնը լսելով ի՞նչ ըրաւ:

163. Յազկերտ երբ Հայոց դէմ դնելը լսեց,
բարկանալով շատ զօրք զրկեց Հայաստան. այս
զօրքերը միացան Վասակայ և ուրիշ մէկ քանի
ուրացող նախարարներու հետ, ու պատարաստ
եղան որ պատերազմին և բռնութեամբ ջնջէն
քրիստոնէութիւնը:

Պատերազմ՝ Վարդանանց 451ին

— Մեծն Վարդան Վարդից պատրաստութիւնը երբ լսեց ինչ ըրաւ:

164. Մեծն Վարդան Հայաստանի ամեն կողմը լուր զսկեց որ ուզողը գայ իրեն հետ պատերազմի Պարսից դէմ. շուտ մը 66,000 կտրիճ Հայեր եկան Վարդանայ քով, որպէս զն քրիստոնէութեան և հայրենեաց համար կռուին:

— Վարդան իւր բանակը մը հաստատեց:

165. Վարդան իւր բանակը Շաւարշան բնակավայրէն դաշար տարաւ. այս դաշտին մէջէն Տղմուտ անուն գետ մի կ'անցնի. Վասակ ալ Պարսից և ուրացող հայոց զօրքովն հոն եկաւ, և երկու կողմն ալ պատերազմի պատրաստեցան:

— Հայոց բանակին մէջ կրօնաւորներ ալ կային:

166. Հատ մը անձնուէր եպիսկոպոսներ և քահանայներ ալ կային Հայոց մեծ բանակին մէջ. ասոնք կռիւէն օր մ'առաջ բոլոր զօրքը խոտտովանցուցին, հաղորդեցին. Ղևոնդ երեց քարոզ մը տուաւ, Մեծն Վարդան ալ ձառ մը խօսեցաւ և զօրքերը սիրտ տոին:

— Պատերազմն ինչպէս եղաւ:

167. Առաւօտ էր՝ երբ պատերազմն սկսաւ:

Հայր և Պարսիկք մեծ կատաղութեամբ մէկ մէկու խառնուեցան ու մէկմէկ ջարդեցին. Տղմուտ գետին ջուրն արիւնով ներկուեցաւ. Պարսիկք տկարացան և սխան ետ քաշուիլ:

— Մ. Վարդան ինչպէս մեռաւ:

168. Ըստ կռուին սաստիկ ժամանակը՝ Մ. Վարդան մեծամեծ քաջութիւններ ընելէ յետոյ՝ զարնուեցաւ ու մեռաւ. այն ատեն Հայերը շփոթեցան, և օրն երեկոյ ըլլալուն ասդին անդին ցրուեցան:

— Պատերազմն վերջը Վասակ ինչ ըրաւ:

169. Պատերազմէն վերջը Վասակ Հայաստանի շատ մը կողմերը պատեցաւ, սոսկալի չարիք գործեց, շատ մարդ սպաննեց, ամեն բան այրեց ջնջեց, բայց չկրցաւ Հայոց մէջէն քրիստոնէութիւնը ջնջել և իսպառաակուեցաւ:

— Այս մեծ պատերազմն մէջ որչափ մարդիկ մեռան:

170. Վարդանանց մեծ պատերազմին մէջ 1036 Հայ և 3544 Պարսիկ մեռան:

— Վասակ ինչպէս սատկեցաւ:

171. Վասակ յանցաւոր դատուեցաւ Պարսից դատաւորին առջև իւր անգլթութեանց համար, և բանտը դրուեցաւ ու հոն որդնաւորով սատկեցաւ:

Ըմեն Հայ Վարդանը կը սիրէ և կ'օրհնէ.
Իսկ Վասակը կ'ատէ և կը նզովէ:

Վասակայ յաջորդող Մարգպանները եւ.

Մ Ե Ծ Ն Վ Ա Հ Ա Ն

— Վասակայ որո՞նք յաջորդեցին:

172. Վասակայ յաջորդեց Ատրորմիզդ Պարսիկ իշխանը, որուն ութ տարիէն յաջորդեց Ատրվշնասպ՝ նոյնպէս Պարսիկ. ասիկա Պարսից թագաւորին հրամանաւ նորէն սկսաւ Հայերը չարչարել և ստիպել որ քրիստոնէութիւնը թողուն. հաւատացեալ նախարարները պատիւէ ձգեց և ուրացեալ նախարարները բարձր աստիճաններու հասցուց:

— Հայոց նախարարները ի՞նչ ըրին Ատրվշնասպի:

173. Հայոց քրիստոնէայ նախարարները Ատրվշնասպի բռնութենէն ազատելու համար՝ Պարսիկներէն ապստամբեցան և իրենց կողմէն Սահակ Բագրատունի իշխանը մարզպան՝ իսկ Վահան Մամիկոնեան իշխանը զօրավար զրին:

— Ո՞վ էր Վահան Մամիկոնեան և ի՞նչեր ըրաւ:

174. Մեծն Վահան Մամիկոնեան՝ Վարչանայ եղբորը տղան էր. ասիկա նախ հաւատքը

ուրացաւ, յետոյ զղջարով դարձի եկաւ և Հայոց զօրաց զլուին անցնելով՝ զարմանալի քաջութեամբ պատերազմեցաւ Պարսից դէմ և միշտ յաղթեց. այս պատերազմաց մէկուն մէջ Սահակ մարզպանը զարնուեցաւ ու մեռաւ տարի մը իշխեիէ յետոյ:

— Մեծին Վահանայ ամենէն նշանաւոր քաջութիւնը զորն եղաւ:

175. Անգամ մը Վահան 30 հոգիով 3—4000 Պարսիկներու մէջ մտաւ գիշեր ատեն և անպարտելի քաջութեամբ կռուելով քանի մը հարիւր մարդ ջարդեց, միւսներն ալ փախցուց:

— Վահան ի՞նչպէս հաշտուեցաւ Պարսից հետ:

176. Պարսիկք սոսկացին Վահանէն, իրենց թագաւորն ալ ուղեց որ ասանկ քաջ մարդու մը հետ հաշտուի. Վահան պայման դրաւ, որ Պարսիկները կրօնքի կամ ուրիշ բանի համար նեղութիւն չը տան Հայոց:

— Վահան ի՞նչպէս մարզպանութիւն ըրաւ:

177. Վահան Պարսից թագաւորին կողմանէ՝ Հայոց մարզպան եղաւ. շատ ծաղկեցուց զՀայաստան, օտար թշնամիները վճնտեց և 26 տարիէն մեռաւ:

Վահանայ յաջորդները մինչև Հազարացիք 182 տ.

Բ. Ե. 511—693

— Վահանայ որո՞նք յաջորդեցին:

170. Վահանայ յաջորդեցին՝ նախ իւր եղբայրը Վարդ 3 տարի. յետոյ Բուրղան անզգամ՝ Պարսիկը 5 տարի. յետոյ Մժեժ Գնունի հայ իշխանը, որ 30 տարի քաջութեամբ և իմաստութեամբ կառավարեց զՀայաստան և օտար թշնամիները վռնեց:

— Հայոց Ազգային թուականն երբ հաստատուեցաւ:

179. Մովսէս կաթողիկոս Քրիստոսէ 551 տարի յետոյ՝ Հայոց Տումայրը շինեց և այն ամենէն սկսաւ մեր Ազգային թուականը:

— Վարդան Բ. Մամիկոնեան իշխանէն վրայ Բնշ գիտե՞լիք կայ:

180. Վարդան Բ. Մամիկոնեան նախարարը՝ Յունաց կայսեր օգնութեամբ մեծամեծ պատերազմներ ըրաւ Պարսից խոսրով թաղաւորին դէմ և երևելի եղաւ:

— Գայլ Վահանի վրայ Բնշ գիտե՞լիք կայ:

181. Գայլ Վահան Մամիկոնեան իշխանը զարմանալի խորամանկութեամբ և յանդգնու-

թեամբ Պարսից 10 հազար զօրքերը ջարդեց և Հայաստանի մէկ մասն անոնց ձեռքէն ազատեց:

— Մժեժ Գնունիին յաջորդող մարզպանները որո՞նք են:

182. Մժեժ Գնունի մարզպանին յաջորդեցին հետեւեալ Պարսիկները. Ղենշապուհ 3 տարի. Վշնաս Վահրամ 5 տարի. Վարազդատ 7 տարի. Սուրէն 14 տ. Վարդան Բ. Մամիկոնեան զՍուրէն սպաննեց, քանզի Սուրէն անոր Մանուէլ եղբայրը մեռցընել տուած էր:

— Սուրէնին որո՞նք յաջորդեցին:

183. Սուրէնին յաջորդեցին Վրոն Նիհր Պարսիկը 14 տ. Միբատ Բազրատունի 8 տ. Դաւիթ Սահառունի 23 տ. ասիկա իւր իշխանութենէն ինկաւ և տեղն անցաւ Վարազդատի տարի 8 տ:

— Վահանէն յետոյ մինչև Վարազդատը Հայերն Բնշպէս ապրեցան:

184. Վահանէն յետոյ նստող մարզպանաց ատեն Հայերը դարձեալ թշուառութեան մէջ ինկան, մինչև 120 տարի. Պարսից թագաւորները զանազան չարչարանօք նեղեցին զերեւելիք միայն երբեմն քաջ և հայրենասէր նախարարներ ու Հայ մարզպանք բարի ծառայութիւններ ըրին ազգին:

— Ո՛վ էր Մեծն Մուհամմետ և Ի՛նչ ըրաւ :

185. Մուհամմետ անուն ուղտապան մը Քրիստոսի 621 թուականին Արաբիոյ (Արապիստան) կրապաշտ ժողովորդեան մէջ նոր կրօնք մը քարոզեց . շատ մարդիկ իրեն հետեւելով Մահմետական կամ Միւսլիման կոչուեցան . Արաբիոյ ժողովուրդը շագարացի ըսուած ազգն էր :

— Պարսից տերութիւնն Ի՛նչպէս կործանեցաւ :

186. շագարացիք քիչ ատենի մէջ սաստիկ զօրանալով՝ Պարսից թագաւորութիւնը կործանեցին և բոլոր Պարսիկները Մահմետական ըրին .

— Պարսից տերութեան կործանելէն յետոյ Հայաստան Ի՛նչ եղաւ :

187. Պարսից տերութեան կործանելէն յետոյ, Յունաց կայսերը տիրեցին Հայաստանի և իրենց կողմանէ վերակացու զրին հոն 632ին . այս վերակացուները Արապապաշտ կոչուեցան, և են . Գաւիթ Մահաուունի 6 տ. Համազասպ Մամիկոն 3 տ. Գրիգոր Մամիկոն 34 տարի, այս վերջինն շագարացուց ձեռքով իշխան եղաւ :

— Առաջին Արապապաշտին ատեն Ի՛նչ պատահեցաւ Հայաստան :

188. Առաջին Արապապաշտին ատեն շա-

գարացիք շայաստան արշաւեցին, և շայոց անմիութենէն օգուտ քաղելով՝ շատ քաղաքներ կործանեցին, անթիւ անհամար մարդիկ սպանեցին, ամենուէն ունեցածը յափշտակեցին և 35,000 գերի բռնելով իրենց երկիրը տարին :

— Երկրորդ կերպապաշտին ատեն Ի՛նչ եղաւ Հայաստան :

189. Երկրորդ Արապապաշտին ատեն շագարացիք դարձեալ մեծ զօրութեամբ շայաստան մտան, շատ մարդիկ ջարդեցին և մնացելոց վըայ ծանր տուրք գրին, Յոյները երբոր իմացան թէ շագարացիք շայոց տիրեր են, ասհազին բանակաւ շայաստան արշաւեցին և տիրեցին բոլոր երկրին :

— Հայաստան վերջապէս որո՞նց իշխանութեան ներքե մնաց :

190. Յոյնք և շագարացիք շատ անգամ մէկմէկու դէմ պատերազմելէ և զՀայաստան արիւնլուայ ընելէ յետոյ, վերջապէս Հագարացիք տիրեցին 693ին, և սկսան իրենց կողմէն իշխաններ զրկել, որոնք դատ կը անանէին, տուրք կը ժողվէին և պէտք եղած ատեն թշնամեաց դէմ կը պատերազմէին . այս իշխանները Ռապիան կոչուեցան :

ՈՍՏԻԿԱՆԱՅ ԻՅԻՍՆՈՒԹԻՒՆ

ԱՊՏՈՒԼԼԱՀ 10 ա.

Ք. Ե. 694—704

— Ո՛վ եղա առաջին Հագարացի ոստիկանը:

191. Առաջին Հագարացի ոստիկանը եղաւ Ապտուլահ կամ Աբդլահ. ասիկա չար մարդ մ'էր և չարաչար նեղեց զՀայերը, որպէս զԵրիտոննէութիւնը Թողուն և Մահմէտական ըլլան:

ԿՈՇՄ 13 ա.

Ք. Ե. 704—717

— Ապտուլահի ո՛վ յաջորդեց:

192. Ապտուլահի յաջորդեց սոսկալի դէշ մարդ մը՝ որոյ անունն էր Սոլմ. ասիկա Հայոց բոլոր նախարարները խարէութեամբ կանչեց, Նախիջևան քաղաքին եկեղեցւոյն մէջ փակեց և այրեց:

ԿՈՇՄԻՆ ՅԱԶՈՐԳԻՆԵՐԸ 133 ա.

Ք. Ե. 717—859

— Սոլմն յաջորդները որո՞նք են:

193. Սոլմն յաջորդեցին իրարու ետեւէ քանի մը Հագարացի ոստիկաններ, քանի մ'ալ Հայ իշխաններ՝ որոնք Պարսիկ կոչուեցան. ասոնք են, Սիլվէ 10 ա. Մահմուտ 4 ա. Ապտիւլ աղիւ 11 ա. Մուսան 1 ա. Աշախագրատունի 15 ա. Եղեա Ա. 2 ա. Մահախ Բագրատունի 7 ա. Արաքսյան 9 ա. Պէքի 7 ա. Հասան 7 ա. Աղեա Բ. 7 ա. Խուզխմա 10 ա. Հոլ 15 ա. Բագրատ Բագրատունի 10 ա. Ապուսէթ 11 ա:

— Ապուսէթ ոստիկանին վայ ի՞նչ դիտելը կա:

194. Ապուսէթ չարազործ ոստիկանը չափազանց բռնութիւն բանեցրնելուն համար՝ Հայերը զարկին ապստամբեցին դէնքը:

— Ո՛վ էր Բուզա:

195. Հագարացւոց մէծն՝ որ ամիրապետ կը կոչուէր, շատ զօրքով Բուզա անուն զօրապետը Հայաստան ղրկեց, որպէս զԵրիտոննէութի մահման վրէժն առնու:

ԲՈՒՂԱՅ տ.

Բ. Ե. 850—855

— Բուղա Բնչ ըրաւ Հայաստանի մէջ:

196. Բուղա անողորմ վագրի նման Հայաստան յարձակեցաւ. և անհամար աղջիկ, կին, տղայ, երիտասարդ ու ծեր ջարդեց, շատերն ալ տաճկոց, և անհնարին աղէտ ու ապականութիւն գործեց մեր խեղճ հայրենեաց մէջ:

— Ո՛ր Հայ իշխանը միացաւ Բուղայի հետ:

197. Բուղայի անգթութենէն ազատելու համար՝ Սմբատ Բագրատունի իշխանը միացաւ իրեն հետ, և շատ նախարարներ մատնեց անոր ձեռքը. ասանկով կը յուսար որ Բուղայի աչքը կը մոռնէ Սմբատ և իրեն չարիք չըլար:

— Բուղա Բնչ ըրաւ Սմբատին:

198. Բուղա Հայաստանն արիւնդուայ ընելէ յետոյ՝ բիւրաւոր մարդիկ Սմբատն ալ մեկտեղ գերի ընելով շլթայի զարկաւ, և հետը Պաղտատ քաղաքն ամիրապետին տարաւ:

— Ամիրապետն Բնչ ըրաւ այդ գերիներուն:

199. Ամիրապետն գերիներուն հրամայեց որ

հաւատքնին ուրանան. ոմանք վախնալով Սահմետական եղան, ոմանք ալ նահատակուեցան. Սմբատ բանտը դրուեցաւ և ըրած չարութեանց վրայ զղջալով՝ մեռաւ և կոշուեցաւ Սմբատ Խոսրովանոյ:

ԱՀՈՏ ԲԱԿՐԱՏՈՒՆԻ. ԻՇԽԱՆԱՅ ԻՇԽԱՆ 25 տ.

Բ. Ե. 859—884

— Բուղայի երթալէն յետոյ Հայաստան Բնչ եղաւ:

200. Բուղայի ատեն Հայաստան վերջին ծայր թշուառութեան հասած էր. իր երթալէն յետոյ Ամիրապետը գթալով Հայոց վրայ՝ Աշոտ Բագրատունիին յանձնեց երկրին կառավարութիւնն և զինքն Իշխանաց Իշխան անուանեց:

— Աշոտ Բնչ ըրաւ:

201. Աշոտ սկսաւ Հայաստանի ամեն կողմը շէնցընել, Հայերը խաղաղեցուց, նախարարներն ալ իրեն հետ միացընելով զօրաւոր բանակ մը կազմեց և զինքը պատկառելի ըրաւ ամենուն. բարեսիրտ Ամիրապետն ալ Աշոտին իմաստութիւնն և քաջութիւնը լսելով՝ Հայոց նախա-

րարներուն աղաչանօք Հայաստանի թագաւոր
պսակեց զինքը, 884 թուին:

Այս ատենէն սխաւ Քաղքատունեաց իշխա-
նութիւնը:

ՄԱՍԵ ՉՈՐՐՈՂ

ԲԱՆՐԱՏՈՒՆ ԱՅ ԻՇ ԽԱՆՈՒԹԻՒՆ

Քաղքատունեաց իշխանութիւնը գլխաւոր ժա-
մանակներու չը բաժնուիր, վասն զի սկիզբէն մին-
չև վերջը Քաղքատունեաց բոլոր թագաւորներն
ուրիշ տէրութեանց հարկատու էին և երևելի
փոփոխութիւն մը չկրեցին:

ԱՇՈՏ Ա. 5 տ.

Գ. Ե. 889—904

— Աշոտ Ա. ինչպէս թագաւոր եղաւ:

202. Աշոտ Ա. Հայ նախարարաց աղաչա-
նօք Ամիրպակեօն ձեռամբ թագաւոր պսակուե-
ցաւ Հայաստանի, և երջանիկ իշխանութիւն մը

վարեց, Հայաստանը խաղաղեցուց, յետոյ Պօղես
զնաց և Յունաց կայսրէն մեծ պատիւ գտաւ.
անկէջ Հայաստան դառնալու ատեն՝ հիւան-
դացաւ ու մեռաւ 5 տ. թագաւորելէ յետոյ:

ՄԵԲԱՏ Ա. 15 տ.

Գ. Ե. 889—904

— Աշոտ Ա. ինչպէս յաջորդեց:

203. Աշոտ Ա. ինչպէս յաջորդեց իր որդին Սմբատ
Ա. ասիկա արի և բարեխիտ թագաւոր մ'էր,
և կուզէր որ խաղաղութեամբ Հայաստանը կա-
ռավարէ, բայց իր Աբաս հօրեղբայրը զէմը պա-
տերազմի ելաւ և ուզեց որ ինքը թագաւորէ:

— Սմբատ ինչ ըրաւ Աբասոյ դէմ, և ո՞ր էր Ա. զին:

204. Սմբատ քանի մ'անգամ յաղթեց Ա-
բասին, բայց չկրցաւ հանդիստ ըլլալ. վասն զի
Միջագետք ըսուած երկրին Ափշին ոստիկանն
երեք չորս անգամ Սմբատոյ դէմ պատերազմի
ելաւ, թէպէտ յաղթուեցաւ:

— Ո՞ր էր Յուսուփ և ինչ ըրաւ:

205. Ափշինի մեռնելէն յետոյ՝ անոր Յու-
սուփ կամ Նուսուփ (Յովսէփ) եղբայրը Արմ-

բատայ վրայ վաղեց. Մմբատ թէպէտև դիմացաւ, բայց երբոր նախարարներն իրմէ զատուեցան, յաղթուեցաւ և հաշտութիւն բրաւ Յուսուփի հետ:

— Յուսուփ Հայերը տկարացնելու համար Ինչ ըրաւ:

206. Յուսուփ ուղեց Հայերը տկարացնելու ստի Գաղիկ Արծրունի իշխանը Վասպուրական երկրին թագաւոր պսակեց. Գաղիկ ալ Յուսուփի հետ միտնալով սկսաւ Մմբատայ դէմ պատերազմիլ:

— Մմբատ Ինչո՞ւ նախարարաց աչքը փորեց:

207. Մմբատ ամեն կողմանէ նեղուեցաւ, վասն զի տղէտ և անմիտ նախարարներն ալ պղտիկ պատճառաւ մը հետը թշնամի եղան և ուղեցին զինքը սպաննել, բայց խայտառակուեցան և Մմբատ անոնցմէ շատերուն աչքերը փորել տուաւ:

— Յուսուփ Ինչպէս բռնեց զՄմբատ:

208. Մմբատ երբ տեսաւ որ Յուսուփ զինքը բռնել կ'ուզէ, քիչ մը զօրքով Վասպոյս ըստած բերդը քաշուեցաւ. Յուսուփ եկաւ բերդը պաշարեց անաւ և Մմբատն ալ զերի բռնեց:

— Ինչ եղաւ Մմբատայ վախճանը:

209. Մմբատ տարի մը հանգիստ ապրելէ յետոյ՝ Յուսուփ ստիպեց զինքն որ հաւատքը ուրանայ. նախ բանտի մէջ զրաւ, յետոյ սկսաւ չարչարել և վերջապէս Հայոց զօրացը դէմ խաչի վրայ գամեց խեղճ թագաւորը. ետքն ալ մորթել տուաւ:

ԱՇՈՏ Բ. ԵՐԿԱԹ 14 տ.

Գ. Ե. 914—928

— Մմբատ Ա. ի մէջ յաջորդեց:

210. Մմբատ Ա. ի մեռնելէն յետոյ՝ Աշոտ Երկաթ իւր որդին՝ զօրք ժողկեց, Հայաստանի թշնամիները վռնտեց և 10 տարի վերջն ալ Հայոց վրայ թագաւոր եղաւ:

— Յուսուփ Ինչ ըրաւ Աշոտ Երկաթին:

211. Յուսուփ շատ զօրքով Աշոտ Երկաթի վրայ եկաւ և սկսաւ Հայաստանի մէջ ամեն գէշութիւն ընել, Հայոց սպէտ և փառասէր նախարարներն ալ անհոգ կեցան:

— Աշոտ կոցաւ Յուսուփի դէմ դնել:

212. Աշոտ մինակ մնալուն չկրցաւ Յուսու-

վի դէմ պատերազմիլ. այս պատճառաւ Հայաստանն եօթն տարի մեծ խեղճութեան մէջ էր:

— Այս խեղճութեան հետեանքն ինչ եղաւ:

213. Երբոր Յուսուփ Հայաստանը կապահանէր, Հայոց նախարարներն ալ մէկ մէկու դէմ կուռիլ սկսան. ուստի շատ մարդ ջարդուցաւ, և երկրազործութիւնը դադրելուն սաստիկ սով եղաւ:

— Այս սովին ժամանակ ինչ եղաւ:

214. Այս սովին ժամանակ շատ մարդիկ աւնօթութենէ մէկզմէկ մեռուցին և միան եփելով կերան. եղան մայրեր ալ որ իրենց զաւակները մորթեցին ու կերան:

— Այս երկաթի ատեն սճ էր Հայոց կաթողիկոսն և ինչ ըրաւ:

215. Այստեղ իրկաթի ատեն Հայոց կաթողիկոսն էր Յովհաննէս Ազգասէր հայրապետաւորապէս Յունաց կայսեր նամակ մը դրեց և անկէ օգնական զօրք ուղեց Այստի համար:

— Այս Յունաց զօրքով ինչ ըրաւ:

216. Այստեղ կ'Պօղիս գնաց և շատ մը Յոյն զօրք առնելով Հայաստան եկաւ Յուսուփը

վրնտեց և Հայոց նախարարներն իրեն հնազանդեցուց:

— Հայաստանն ինչու նորէն խռովեցաւ:

217. Այստեղ հօրեզօրը որդին Այստ բունաւոր անունն իշխանը Յուսուփի ձեռք թաղաւոր եղաւ և սկսաւ Այստ իրկաթին դէմ կուռիլ. ուստի Հայաստան դարձեալ տակն ՚ի վրայ եղաւ:

— Այստ երկաթ ինք զինքն ազատելու համար ինչ ըրաւ:

218. Այստ այսպէս թշնամիներէ պաշարուելով ուղեց որ իր անձը ազատէ. 100 քաջ մարդեր ժողովեց և Քեղամայ ծովուն մէջ Աւան ըսուած կղզին գնաց:

— Այստ Աւան կղզին դնուած ատեն որն հետ պատերազմեցաւ:

219. Յուսուփայ իշխաններէն Պէշիր անունն մէկը շատ զօրքով Այստի դէմ ելաւ. Այստ 70 հոգևով Քեղամայ ծովուն վրայ պատերազմեցաւ անոր հետ, յաղթեց և փախցուց զինքը:

— Այստ Պէշիրը փախցընէն յետոյ ինչ ըրաւ:

220. Այստ Պէշիրը փախցընէն յետոյ Հայաստանը խաղաղեցուց և քիչ ատենէն մեռաւ. 14 տարի թագաւորեց. չափէ դուրս քաջութեանն համար Այստ իրկաթ կուռեցաւ:



ՔՐԱՍ 24 ա. ԵՆ ԱՇՈՏ Գ. ՈՂՈՐՄԱԾ 16 ա.

բ. Ե. 928—977

— Աշոտ Երկաթին ո՛վ յաջորդեց :

221. Աշոտ Երկաթին յաջորդեց իր Աբաս եղբայրը. ասիկա շատ զօրք ժողվեց, Հայաստանի բոլոր թշնամիները վաճառեց և նախարարները զսպեց :

— Աբաս քանի՞ տարի թագաւորեց և իրեն ո՛վ յաջորդեց :

222. Աբաս 24 տարի քաջութեամբ և իմաստութեամբ իշխեց յետոյ մեռաւ : Իւր Աշոտ որդին 90,000 զօրք ժողվելով Հայոց թշնամիները արսափեցուց և 9 տարիէն թագաւոր եղաւ :

— Կարոց թագաւորութիւնն ինչպէս հաստատուեցաւ :

223. Աշոտ Գ.ին պզտիկ եղբայրը Մուշեղ Կարս քաղաքին մէջ ինքզինքը թագաւոր պսակեց. Աշոտ չուզելով որ պատերազմ ըլլայ խաղաղութիւն ըրաւ հետը. Մուշեղին հաստատած այս թագաւորութիւնը կոչուեցաւ Թագաւորութիւն Կարսի :

— Աշոտ Գ. ինչպէս որոշեց ըսուեցաւ :

224. Աշոտ Գ. աղքատները շատ կը սիրէր, իւր բոլոր ունեցածն անոնց կը բաշխէր և անոնց հետ կը ճաշէր. անոր համար Աշոտ Ողորմած կոչուեցաւ :

— Աշոտ Ողորմածին ո՛վ յաջորդեց :

225. Աշոտ Ողորմած 16 տարի թագաւորելով երջանիկ ըրաւ զՀայերն և մեռաւ. իրեն յաջորդեց իր որդին Սմբատ Բ. :

ՍՄԲԱՏ Բ. 13 ա. ԳԱԳԻԿ Ա. 30 ա.

բ. Ե. 977—1020

— Սմբատ Բ. ինչպէս թագաւորեց :

226. Սմբատ Բ. Հայոց թագաւորեցաւ իւր հօրը տեղ և իմաստութեամբ կառավարեց ըզՀայաստան. Անի անուսով քաղաք նորոգեց ու մեծցուց և չորս կողմը պարիսպ քաշել, 1,000 շափ ալ եկեղեցի շինեց մէջը և 13 տարիէն մեռաւ :

— Սմբատ Բ.ի ո՛վ յաջորդեց :

227. Սմբատ Բ.ի յաջորդեց իւր որդին Գագիկ Ա. յասիկայ հօր և իմաստուն թագաւոր

մ'եղաւ, 30 տարի խաղաղութեամբ կառավարեց շայաստան, և մեռաւ բոլոր շայերը սուգի մէջ թողլով:

ՅՈՎՀԸՆՆԵՍ-ՍԹԲԸՏ 20 ա.

բ. ե. 1020—1040

— Գագիկ Ա ի նի յաջորդեց:

228. Յովհաննէս—Սմբատ՝ Գագիկի որդին իւր հօրն յաջորդեց. ասիկա տկար և թոյլ թագաւոր մ'եղաւ, թշնամիք ալ եկան շատ շարիք ըսին շայոց:

— Յովհաննէսի հակառակորդն ով էր:

229. Յովհաննէսի Բշտ եղբայրը կրակոտ և քաջ երիտասարդ մ'էր. ուրիշ որ ինքը թագաւոր ըլլայ. ղոքը ժողովեց, շայաստանը տակն ի վրայ ըրաւ, բայց չյաջողեցաւ:

— Յովհաննէսի ասին շայաստան ինչ նոր թշնամի ունեցաւ:

230. Յովհաննէսի ատեն Միւթացի Թաթար ըսուած գաղանաբարոյ ազգը ահագին բազմութեամբ շայաստան եկաւ. այս ազգին իշխանն էր Տուղբիլ պէկ անուն բռնաւորը:

— Տուղբիլ ինչ ըրաւ շայաստանի մէջ:

231. Տուղբիլ 7 տարի շայաստանը աւերեց, մեծամեծ քաղաքներ կործանեց, քանի մը հարիւր հազար մարդ ջարդեց և անհամար գերի բռնեց, շատ մորդ ալ բռնութեամբ Մահմետական ըրաւ:

— Արիւն ինչ ըրաւ Տուղբիլ:

232. Տուղբիլ մեծ բանակով Մանազկերտ ըսուած ամուր քաղաքին վրայ գնաց. քաղաքացիք միացան ու դէմ դրին, մեծամեծ քաջութիւններով Թաթարները վախցուցին, Գագիկացի վարպետ մ'ալ Տուղբիլի պայապամարտ մեքենաներն այրեց. Տուղբիլ ամօթով ետ քաշուեցաւ:

— Թաթարներէն ուրիշ որոնք յարձակեցան շայաստան:

233. Թաթարներէն զատ Յոյներ ալ շայաստան արշաւեցին. Յովհաննէս թագաւորը տկար ըլլալուն՝ Վասիլ Այսյեր թուրք տուաւ որ իւր մեռնելէն յետոյ Ընի քաղաքն Յունաց ձեռքն անցնի, միայն թէ կայսրը օգնէ իրեն Թաթարաց դէմ:

— Կայսրն ինչ ըրաւ:

234. Կայսրն այս թուրքը առնելով ուրա-

խացաւ և շատ զօրք զըկեց Յովհաննէսին՝ որպէս զի թախարհները վռնատ:

— Կիրակոս քահանային վրայ ինչ գիտեւէք կայ:

235. Առտանդին կայսրը մեռնելու ատեն Կիրակոս անունն Հայ քահանայ մը կանչեց և Յովհաննէսին Անիի համար վասիլ կայսեր զըկած թուղթն անոր յունձնեց ու ըսաւ «Տար այս թուղթն և թագաւորիդ տուր»:

— Կիրակոս թուղթն ինչ ըրաւ:

236. Կիրակոս քահանայն թուղթը քովը պահեց և երբ Միքայէլ անուն մէկն Յունաց կայսր եղաւ, սոսկալն անօրէնութեամբ տարաւ անոր տուաւ և փոխարէն շատ ստակ առաւ:

— Այս քահանային մասնութեան հետեանքն ինչ եղաւ:

237. Այս անարժան քահանայն Յուդայի նման իւր հայրենիքը մատնեց և Հայաստանի մինչև հիմայ կրօն թշուառութեանց մէկ պատճառն ալ ինք եղաւ:

— Յովհաննէս — Մմբատ որչափ թագաւորեց:

238. Յովհաննէս — Մմբատ 20 տարի թագաւորեց ու մեռաւ, իրեն յաջորդեց իւր եղբորորդին՝ Գագիկ Բ.՝ որ թէպէտ 16 տարեկան, բայց խելացի և քաջ երիտասարդ մ'էր:

Գ Ա Գ Ի Կ Բ. 5 ա.

Բ. Ե. 1040—1045

— Գագիկ Բ. թագաւորելուն պէս ինչ ըրաւ:

239. Գագիկ Բ. իւր Յովհաննէս հօրեղբորն յաջորդելուն պէս ուզեց որ Հայաստանի թշնամիները վռնտէ, 16,000 զօրք ժողովեց, թախարաց զէմ պատերազմեցաւ և հալածեց զանոնք:

— Ո՞վ և ինչպէս մարդ էր Ա. Եստ Սարգիս:

240. Գագիկին ժամանակը Ա. Եստ Սարգիս անուն հայ իշխան մը կար Հայաստանի մէջ. ասիկայ սկսաւ աշխատիլ որ Գագիկին տեղ ինքն ըլլայ թագաւոր:

— Յոյներն ինչու Հայաստան արշաւեցին:

241. Ա. Եստ Սարգիս Յունաց կայսեր խօսք տուաւ որ Անի քաղաքը իրեն տայ. Գագիկ դէմ կեցաւ. այս պատճառաւ կայսրը յունական բանակ մը զըկեց Հայաստան, բայց Գագիկ վռնտեց զանոնք:

— Ա. Եստ Սարգիս Գագիկին տեղն անցնելու համար ինչ միջոց գործածեց:

242. Ա. Եստ Սարգիս Հայոց նախարարներէն

շատերն և Գեփարայ) կոչուած Պետրոս կաթողիկոսն իրեն հետ միացուց և ջանք ըրաւ որ Ղրազիկ թաղաւորութենէ ձգէ. այս պատճառաւ խորհուրդ տուաւ Յունաց կայսեր, որ ըզրազիկ Ա. Պօլես կանչէ և հոն վար դնէ:

— Յունաց կայսրը Գազիկն ինչպէս հրաւեր ըրաւ:

243. Յունաց կայսրը նամակ ղրկեց և Գազիկը Ա. Պօլես հրաւիրեց տեսութեան համար. երգում ալ կ'ընէր որ գեշութիւն չընէր իրեն՝ այլ թող կու տայ որ նորէն Մնի դառնայ:

— Գազիկ Ա. Պօլես երթալ ուզեց:

244. Գազիկ իմացաւ որ կայսրն իրեն խաղախութիւն պիտի ընէ, ուստի չուզեց Պօլես երթալ:

— Վեստ Սարգիս և Պետրոս կաթողիկոս քնչ երգում ըրին:

245. Աեստ Սարգիս և Պետրոս կաթողիկոս Գազիկին առջև Ս. Հաղորդութեան վրայ երգում ըրին և ըսին իրեն. «Մենք Մնի քաղաքն Եւրիշի չենք յանձներ մինչև որ դու ետ գառնաս»:

— Գազիկ Ա. Պօլես գնաց:

246. Գազիկ առանց ուղեւու Ա. Պօլես գրեհաց. կայսրը քանի մ'որ մեծ պատիւներ ըրաւ

իրեն. բայց յետոյ բանտարկեց ղինքն, և բռնութեամբ Մնի քաղաքն ուղեց:

— Գազիկ Մնի քաղաքը տուան կայսեր:

247. Գազիկ հայրենասէր թաղաւորը ամեն կերպով դէմ կեցաւ և ըսաւ կայսեր թէ «Մնի քաղաքն իմն չէ, այլ Հայոց ազգինն է և ես բան մը չունիմ որ տամ քեզ»:

— Ո՛վ կայսեր մասնեց Մնի քաղաքը:

248. Պետրոս կաթողիկոս Աեստ Սարգսի և ուրիշ նախարարաց հետ միացաւ ու կայսրէն շատ ստակ առնելով, Մնի քաղաքին 40 բանալիները Ա. Պօլես ղրկեց. խեղճ Գազիկ թաղաւորը զարհուրեցաւ այս սոսկալի վատութեան վրայ:

— Մնի բանալիներն առնելէ յետոյ կայսրն քնչ ըրաւ:

249. Այսրն, Մնի բանալանիներն առնելէ յետոյ զԳազիկ թաղաւորութենէ ձգեց, և միայն քանի մը պղտիկ քաղաքներ տուաւ անոր. Գազիկ կատաղութեամբ և յուսահատութեամբ շատ Յոյներ սպաննեց, Յոյներն ալ որ մը բռնեցին սպաննեցին ղինքը:

— Բանի տարի թաղաւորեց Գազիկ ք:

250. Գազիկ 5 տարի թաղաւորելէ յետոյ 34 տարի ալ ապրեցաւ և այնպէս մեռաւ:

Բազրատունեաց Թագաւորութիւնը կործանեցաւ Քրիստոսէ 1045 տարի յետոյ,

ԳԻՏԵԼԻՔ

Արծրունեաց Սագաւորութեան Արայ. 113 տ.

Ք. Ե. 908—1021

— Արծրունեաց Թագաւորութիւնն ինչպէս մկաւ:

251. Բազրատունեաց Մքրատ Ե. Թագաւորին ատեն, Քրիստոսէ 908 տարի յետոյ, Արծրունի ըսուած Հայ յեղին նախարարը Պապիկ Զուսուկին Թագաւոր պատկուեցաւ Հայաստանի Ասպուրական նահանգին վրայ: Այս Թագաւորութիւնը կոչուեցաւ Արծրունեաց Թագաւորութիւն:

— Արծրունեաց Թագաւորութիւնն որչափ տևեց:

252. Արծրունեաց Թագաւորութիւնը տևեց մինչև Քրիստոսի 1,021 թուականը, այսինքն 113 տարի:

Արջին Թագաւորն եղաւ Սենեքերիմ:

— Սենեքերիմ ինչու ձգեց Թագաւորութիւնը:

253. Սենեքերիմի ժամանակ Թաթարներն

Ասպուրական արշաւեցին. Սենեքերիմ տկար ըլլալով Յունաց կայսրէն խնդրեց որ Ասպուրական նահանգն Յունաց Թողս և ինքը փոխարէն Սերաստիան առնէ:

— Ինչպէս վերջացաւ Արծրունեաց Թագաւորութիւնն:

254. Սենեքերիմ, Յունաց կայսեր հաճութեամբը, հետը 400,000 հոգի առած՝ Սերաստիա գնաց ու հոն բնակեցաւ. ասանկով վերջացաւ Ասպուրականի մէջէն Արծրունեաց Թագաւորութիւնը. Սենեքերիմի մեռնելէն յետոյ իւր յաջորդները բոլորովն Թողուցին Թագաւորութեան պատիւը:

ԳԻՏԵԼԻՔ

Արուց Սագաւորութեան Արայ. 93 տ.

Ք. Ե. 961—1063

— Արուց Թագաւորութիւնն ինչպէս հաստատուեցաւ:

255. Բազրատունեաց Աշոտ Գ. Աղսրնաճ կոչուած Թագաւորին ժամանակը՝ Քրիստոսէ 961 տարի յետոյ՝ Սուլեյ իխանը Արսա քաղաքին մէջ ինքզինքը Թագաւոր պատկեց և կոչուեցաւ Թագաւոր Արուց:

— Ի՞նչպէս կործանեցաւ Կարուց Թագաւորութիւնը:

256. Կարուց վերջին Թագաւորն եղաւ Պազիկ անուն մէկը. ասիկայ Պարսից Ալփասլան Թագաւորէն վախնալով՝ իւր երկիրն Յունաց կայսեր տուաւ, և ինք գնաց պղտիկ բերդի մը մէջ բնակեցաւ:

— Կարուց Թագաւորութիւնը որչափ տևեց:

257. Կարուց Թագաւորութիւնն 93 տարի տևեց և Քաղրատունեաց անկումէն քիչ մը յետոյ կործանեցաւ, ուստի Վրիստոսի 1,065 Թուականին բոլոր Հայաստան օտար Թագաւորներու ձեռք մնաց:

— Այս Թշամիք Ի՞նչ ըրին Հայաստանի մէջ:

258. Այս Թշամիք մեծամեծ աւերմունք զործեցին, անհամար մարդ ջարդեցին, շատ քաղաքներ կործանեցին. ուստի բիւրաւոր թշուառ Հայ ընտանիք, իրենց անձն ապրեցընելու համար՝ ունեցածնին թողուցին, և Հայաստանէն ելնելով օտար երկիրներ գաղթեցին:

Հայոց գաղթած առաջին երկիրներն եղան Աիլիկիա, Խրիմ, Լեհաստան և Մոլտաւիա,

ԳԻՏԵԼԻՔ

Անի քաղաքին վրայ. 343 տ.

բ. Ե. 987—1320

— Անի քաղաքն ո՞վ շինեց:

259. Անի առաջուց պղտիկ քաղաք մ'էր. Քաղրատունեաց Սմբատ Ք. Թագաւորը, Վրիստոսէ 977 տարի յետոյ. շատ շէքերով զարդարեց զայն և չորս կողմը լայն ու ամուր պարիսպ մը քաշեց:

— Անիի մը որչափ բնակիչ կար:

260. Անիի մէջ 8—900,000 բնակիչ կար և խիստ շատը հարուստ մարդիկ էին:

— Քաղրատունեաց անկումէն յետոյ Անիի վրայ որո՞նք յարկակեցան:

261. Քաղրատունեաց Թագաւորութեան կործանելէն յետոյ Յոյնք քանի մ'անգամ Հայաստան եկան և Անի քաղաքը պաշարեցին:

— Անեղք Ի՞նչ ըրին Յունաց դէմ:

262. Անեղք միանալով ջարդեցին Յունաց լորքը, բայց յետոյ երբ լսեցին որ Պազիկ Թա-

գաւորն ետ պիտի դառնայ, քաղքին դռները բացին և Յոյները ներս առին:

— Յոյներէն յետոյ Անի որո՞նք տիրեցին:

263. Քիչ ժամանակ ետքը Թաթարներն ու Պարսիկները Անին առին ու շատ մարդ ջարդեցին. այս պատճառաւ շատ մարդիկ տուներնին տեղերնին ձգեցին և օտար երկիրներ դնացին.

— Ասոցմէ յետոյ որո՞նք տիրեցին Անի:

264. Պարսիկներէն և Թաթարներէն յետոյ զանազան բռնաւորներ Անի քաղաքին տիրեցին մինչև Քրիստոսի 1320 թուականը:

— 1320ին Բնչ եղաւ:

265. Քրիստոսի 1320 թուականին Հայաստանի մէջ սոսկալի երկրաշարժ մ'եղաւ և Անի քաղաքը կործանեցաւ. մէջի բնակիչներն ալ ցրուեցան. Ալքսուի թէ մէկ մասը Անի քաղաքը շինեց և հոն բնակեցաւ:

— Անի աւերակները մնացած են:

266. Անիի աւերակները մինչև հիմայ կ'երևան. շատ ճամբորդներ հոն կ'երթան պարտելու և կ'րան թէ տակաւին մէկ եկեղեցի և ուրիշ քանի մը շէնքեր կանգուն մնացած են:

ՄԱՍԵ ՀԻՆԻՆՈՒԹԻՒՆ

ՌՈՒԲԻՆԵԱՆՑ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Ռուբինեանց իշխանութիւնը երեք զնաւոր ժամանակներու կը բաժնուի, որք են
Ա. Իշխանապետութիւն Ռուբինեանց.
Բ. Թագաւորութիւն Ռուբինեանց.
Գ. Թագաւորը Լատինք:

Ա

ԻՐԻՅՆԱՊԵՏՈՒԹԻՒՆ ԲՈՒԲԻՆԵԱՆՑ

ՌՈՒԲԻՆ 15 տ.

բ. ե. 1080—1095

— Յ՛լ եր Ռուբէն:

267. Բաղրատունեաց Քաղիկ Բ. Թագաւորին մեռնելէն 30 օտարի յետոյ Ռուբէն անուն Հայ իշխան մը երևան ելաւ. այս Ռաւ-

բէնը նոյն Գազիկ Թագաւորին ազգականն էր

— Ռուբէն ինչ նպատակ ունեցաւ:

268. Յոյներն Հայոց ծանր չարիք կը հասցընէին և կ'ուզէին ջնջել Հայոց ազգը. Ռուբէն միտքը դրաւ որ Յոյներէն վրէժ տանու և իշխանութիւն մը հաստատէ:

— Ռուբէն ո՞ր և ե՞րբ հաստատեց իւր իշխանութիւնը:

269. Ռուբէն քանի մը հարիւր քաջ հայեր ժողովեց. Հայաստանէն դուրս Ալիկիոյ մէջ Տորոս ըսուած բարձր և ամուր լեռան վրայ ելաւ. և հոն շատ հայեր դտնելով իշխանապետ եղաւ անոնց՝ Բրիստոսի 1080 թուականին և 15 տարիէն մեռաւ:

ՌՈՍՏԱՆԻՒՆ Ա. 5 տ.

Ք. Ե. 1095—1100

— Ռուբէնի ո՞վ յաջորդեց:

270. Ռուբէնի յաջորդեց իւր քաջ և խմաստուն որդին Աստանդին Ա. ասիկայ 5 տարի իշխանապետութիւն ըրաւ. Յունաց հետ շատ անգամ պատերազմելով յազթեց անոնց և բազմաթիւ քաղաքներ և գիւղեր նուաճեց.

— Աստանդին ինչպէս կոմս կոչուեցաւ:

271. Արուսայի իշխանները շատ զօրքով Ասիա եկան և կ'ուզէին Արուսադէմ քաղաքը Մահմետականաց ձեռքէն ազատել. Աստանդին մեծ օգնութիւններ ըրաւ անոնց, ուտելիք և ըզդեստ զրկեց, այն իշխաններն ալ Աստանդինի պատիւ ընելով Ալիկիոյ տէր ճանչցան և Աոմս կոչեցին զենքը:

ԹՈՐՈՍ Ա. 23 տ.

Ք. Ե. 1100—1123

— Աստանդինի ո՞վ յաջորդեց:

272. Աստանդինի յաջորդեց իւր Թորոս որդին. ասիկայ հօրը նման քաջ և խմաստուն իշխան մ'եղաւ. մեծ պատերազմներ ըրաւ Յունաց և ուրիշ ազգաց դէմ, չորաչար յաղթեց անոնց և բոլոր Ալիկիա ըսուած ընդարձակ երկիրը նուաճեց:

— Թորոս Գազիկ Թագաւորին վրէժը ինչպէս լուծեց:

273. Թորոս Գազիկ Թագաւորն սպաննող յոյները բռնեց և անոնց երկրին տիրեց. 23 տա-

յի փառաւոր իշխանութիւն վարելէ յետոյ մե-
ռաւ:

ԼԵՒՈՆ Ա. 22 տ.

Ք. Ե. 1123—1145

— Թորոս Ա ի ով յաջորդեց:

274. Թորոս Ա ի յաջորդեց իւր Լևոն Ա.
որդին. ասիկայ Աւրոպայի Թագաւորաց քով
շատ անուանի եղաւ իւր իմաստութեան և քա-
ջութեան համար, Յունաց դէմ պատերազմներ
ըրաւ և անոնց երևելի քաղաքներուն տիրեց:

— Յունաց կայսրը Լևոն Ա ի Բնչ ըրաւ:

275. Մայսրն անհամար զօրքով Լևոն Ա ի
վրայ եկաւ, յաղթեց և բռնեց զինքը ու Ս. Պօ-
ղոս տաներով բանտը դրաւ իւր զաւակաց հետ.
Լևոն 4 տարի կեցաւ բանտին մէջ ու մեռաւ:

— Անարգաբայի Հայոց վրայ Բնչ գիտելիք կայ:

276. Լևոն Ա ի Ժամանակ յոյնք կուղէին
Հայոց Անարգաբա քաղաքն առնել, քաղաքին
բնակիչները այր՝ կին՝ տղայ՝ աղջիկ՝ ամենքն ալ
կատաղութեամբ պատերազմեցան Յունաց դէմ
և շարդեցին զանոնք:

Անարգաբայի երկի մարդիկն հայրենասէր տի-
տաններ, և կնիկ մարդիկն ալ սքանչելի դիւցազ-
նուհիներ կին:

ԹՈՐՈՍ Բ. 24 տ.

Ք. Ե. 1144—1168

— Լևոն Ա ին մեռնելէն յետոյ Արեւիկա Բնչ եղաւ:

277. Լևոն Ա ի մեռնելէն 3 տարի յետոյ՝
իւր Թորոս որդին բանտէն փախաւ, Արեւիկա
եկաւ, Հայոց քաջերը ժողվեց, Յոյները վռն-
տեց, բոլոր Արեւիկոյ տիրեց և հօրը իշխանու-
թիւնը նորէն հաստատեց:

— Թորոս Բ. Յունաց դէմ Բնչ ըրաւ:

278. Թորոս Բ. իրմէ առջե իշխաններէն շատ
աւելի զօրաւոր եղաւ. Յունաց կայսրը մեծ
բանակաւ իւր վրայ եկեր էր, Թորոս Հայոց
քաջ զօրքերով սաստիկ պատերազմեցաւ անոր
դէմ, չարաչար յաղթեց Յունաց, և անոնցմէ
բազում իշխաններ զերի բռնեց:

— Թորոս Բ. Բնչուկս վախցոյց իւր թշնամիները:

279. Արեւիկոյ սահմանակից քանի մը Մահ-
մետական սուլթաններ կային. ասոնք Թորոս

Բ.ի վրայ նախանձելով՝ անոր դէմ պատերազմի ելան. բայց Թորոս յազթեց անոնց, և իւր իշխանութիւնը մինչև Միջերկրական ծովն հասցուց, ասանկով վախ ձգեց իւր թշնամեաց սիրորը:

— Արեւիկա Ինչպէս բոլորովն Հայոց ձեռքն անցաւ:

280. Յունաց կայսրը երկրորդ անգամ պատերազմի ելաւ Թորոս Բ.ի դէմ. բայց շուտով հաշտուեցաւ հետն, և զինքը բոլոր Արեւիկայ իշխան ճանցաւ. այսպէս Հայերը բոլոր Արեւիկան զրաւեցին: Թորոս 24 տարի իշխեց ու մեռաւ:

ՄԼԷԷ 6 ա.

բ. Ե. 1168—1174

— Թորոս Բ.ի ո՛վ յաջորդեց:

281. Թորոս Բ.ի մեռնելէն յետոյ իւր ՄԼԷՏ անուն եղբայրը այլազգի զօրքով Արեւիկա մտաւ, շատ մարդ ջարդեց, զիւղեր ու քաղաքներ այրեց, Թորոսի որդին սպաննեց և բռնութեամբ իշխանապետ եղաւ:

— Ո՞վ էին պապականներն և Ինչ կուպէին ընել Արեւիկոյ ո՛ր:

282. ՄԼԷՏի ատեն շատ մը եւրոպացի Լա-

տիններ կային Արեւիկոյ մէջ. ատոնք Պապական էին, այսինքն չ'ոտ՝ քաղաքը նստող Պապին կը հնազանդէին. այս Լատինները ջանացին որ չ'այերը Պապական ընեն, և կ'ըսէին թէ «Պապական չեղողը արքայութիւն պիտի չ'մտնէ»:

— ՄԼԷՏ Ինչ ըրաւ Լատինաց:

283. ՄԼԷՏ տեսնելով որ Լատինք չ'այոյ մէջ խռովութիւն կը հանեն, զամենքն ալ Արեւիկայէն վճնտեց:

— ՄԼԷՏ Ինչ ու սպաննուեցաւ:

284. ՄԼԷՏ քանի մը ուրիշ անգթութիւններ ալ ըրաւ. չ'այոյ զօրքերն ալ վրան յարձակեցան և սպաննեցին զինքը՝ 6 տարի իշխելէն յետոյ:

ԹՈՒԲԵՆ Բ. 11 ա.

բ. Ե. 1174—1185

— ՄԼԷՏի ո՛վ յաջորդեց:

285. Ուուբէն Բ. ՄԼԷՏի եղբօրորդին յաջորդեց իրեն. ասիկա իւր բարութեամբ և իմաստութեամբ Արեւիկան ծաղկեցուց և երջանիկ ըրաւ զչ'այերը:

— Լատին իշխաններն Ի՛նչ ըրին Ռուբէն Բ. Ի :

286. Լատին իշխանները խարդախութեամբ Ռուբէնը բռնեցին ու բանտարկեցին . բայց Ռուբէնի Լեոն անուն եղբայրը Հայոց քաջերը ժողվեց, զնաց իշխանները սարսափեցուց, և եղբայրն ազատելով վերստին Աիլիկիոյ իշխանապետ ըրաւ : Ռուբէն Բ. 11 տարի իշխելէ յետոյ մեռաւ :

Բ

ԹԱԳԱՒԱՐՈՒԹԻՒՆ ԲՈՒՐՆԵՍԱՆՅ

ՄԵԾՆ ԼԵՒՈՆ Բ. 34 ա.

Ք. Ե. 1185—1219

— Ռուբէն Բ. Ի ով յաջորդեց :

287. Ռուբէն Բ. Ի մեռնելէ յետոյ էւր եղբայրը Մեծն Լեոն Բ. յաջորդեց իրեն . ասոր ժամանակը Աիլիկիա շատ ծաղկեցաւ ու փառաւորեցաւ :

— Մեծն Լեոնի ատեն Ի՛նչ երևելի դէպք պատահեցաւ :

288. Մեծն Լեոնի ատեն Գերմանացւոց

կայսրը և ուրիշ երևելի քրիստոնեայ իշխաններ զօրքով Աիլիկիա եկան, և անկէց ալ դացին Երուսաղէմ քաղաքը Մահմետականաց ձեռքէն զայն առնելու . այս քրիստոնեայնէրը Խաչակիրք կը կոչուէին :

— Մեծն Լեոն Ի՛նչ ըրաւ Խաչակրաց :

289. Մեծն Լեոն Բ. Խաչակրաց մեծաձեծ օղնութիւններ ըրաւ . Գերմանացւոց կայսրն ալ խոստացաւ որ զինքն Հայոց վրայ թաղաւոր պսակէ :

— Լեոն Ի՛նչպէս թաղաւոր եղաւ :

290. Գերմանացւոց և Յունաց կայսրերուն հաւանութեամբ՝ Մեծն Լեոն շքեղ հանդէսով Աիլիկիոյ Հայոց թաղաւոր օժուեցաւ և իւր աթոռը Միս քաղաքին մէջ հաստատեց :

— Ի՛նչ կ'ուզէին Հռոմայ պապն ու Լատին իշխանները :

291. Հռոմայ Պապն ու Լատին իշխաններն կը ջանային որ զԼեոն և բոլոր Հայերը պատրական ընեն և ամեն կամքերնին կատարեն . բայց Լեոն անոնց չար միտքն հասկընալով բոլոր Լատին կրօնաւորներն ու շատ մը իշխաններ Աիլիկիայէն վճռեց և երկիրը խաղաղեցուց :

— Մեծն Լեոն ուրիշ Ի՛նչ ըրաւ :

292. Մեծն Լեոն Աիլիկիոյ բոլոր թշնամեաց

դէմ պատերազմեցաւ և միշտ յաղթեց. 34 տարի շայերը կռուվարելէ յետոյ մեռաւ ու Աիս քաղաքը թաղուեցաւ:

ՓԻԼԻՊՊՈՍ 1 տ. ՀԵԹՈՒՄ 48 տ.

Ք. Ե. 1220—1269

—ՄԵԾԻՆ ԼԵՆԻ ՌՂ յաջորդեց:

293. ՄԵԾԻՆ ԼԵՆԻ ՌՂ. միայն Օձապել անուն աղջիկ մը ունէր 16 տարեկան. իշխանները միացան և Օձապելը Փիլիպպոս անուն լատինի մը հետ ամուսնացուցին. Փիլիպպոս թագաւորեց շայոց:

—Փիլիպպոս ինչո՞ւ սպանուեցաւ:

294. Փիլիպպոս զշայերը ատեց, նաև սխալ Աիս քաղաքին հարստութիւնները յափշտակել. շայերը նեղացան և սպաննեցին զինքը մէկ տարիէն:

—Փիլիպպոսի ՌՂ յաջորդեց:

295. Օձապել երկրորդ անգամ ամուսնացաւ շեթում անուն շայ իշխանին հետ, որ Լըշակունեաց ցեղէն էր. ասիկայ ազգասէր ու

քաջ թագաւոր մ'եղաւ, Աիլիկիան շէնցուց և թշնամիքը հալածեց:

—Շեթում Ա. ինչո՞ւ թաթարտան դնաց:

296. Թաթարները նեղութիւն կու տային շայոց. շեթում ելաւ թաթարտան դնաց՝ որ 3 ամսոյ ճանապարհ հեռի է Աիլիկիայէն. հոն թաթարաց Խանը տեսաւ և իւր խնդիրը կատարել տուաւ:

—Շեթում Ա. ինչ զժրագրութիւն ունեցաւ:

297. Ազիպտոսի Սուլթանն շեթումի դէմ պատերազմի ելաւ. այս պատերազմին մէջ շայերն յաղթուեցան և շեթումի ԼԵՆԻ տղան գերի բռնուեցաւ. շայոց իշխաններն շատ ստակ տուին և ԼԵՆԻն ազատեցին:

—Շեթում իւր ճերութեան ատեն ինչ ըրաւ:

298. շեթում իւր ճերութեան ատեն թագաւորութիւնը ԼԵՆԻ տղուն թողուց և ինքը Արազարկ ըսուած Անըրը նստաւ ու հոն մեռաւ 48 տարի թագաւորելէ յետոյ:

ԼԵՒՈՆ Գ. 20 ա.

Ք. Ե. 1269—1289

— Լևոն Գ. Բն ըրաւ:

299. Լևոն Գ. իւր հօրը Հեթում Լ. ին յաջորդելով քաջութեամբ և իմաստութեամբ Արևիկան պայծառացուց, ամեն տեղ դպրոցներ բացաւ ժողովուրդը կրթելու համար և օտար աղքետու հետ բարեկամութիւն հաստատեց:

— Լևոն Գ. ի թշնամիներն որոնք եղան:

300. Լևոն Գ. ի ատեն Արևիկոյ մէջ Լա տին իշխաններն ու կրօնաւորները շատ զօրացած էին, ասոնք կ'ուզէին որ Արևիկոյ թագաւորութիւնն իրենց ձեռքն անցունեն, ուստի Լևոնի դէմ զրգուեցին Ազխատոսի Սուլթանը:

— Բն ըրին Ազխատոսը:

301. Ազխատոսիք անհամար բազմութեամբ յանկարծ Արևիկա արշաւեցին, շատ աւեր և աւաղանուութիւն գործեցին. Լևոն անպատրաստ ըլլալով չկրցաւ անոնց դէմ պատերազմիլ:

— Լևոն Բն ըրաւ Ազխատոսուց դէմ:

302. Ազխատոսիք երկրորդ անգամ Արևիկա

արշաւեցին, Լևոն ժողովեց Հայոց քաջ զորքերը և մեծ ջարդ տուաւ Ազխատոսուց. Լևոնի այս քաջութիւնը շատ թագաւորներ և իշխաններ լսեցին, և ակնածելով հետը բարեկամ եղան:

— Լևոն Գ. որչափ թագաւորեց:

303. Լևոն Գ. 20 տարի թագաւորեց ու մեռաւ, Հայերը շատ ցուեցան իւր մահուան վրայ:

ԼԵՒՈՆ Գ. Ի ՅԱԶՈՐԳՆԵՐԸ 31 ա.

Ք. Ե. 1289—1320

— Լևոն Գ. ի ով յաջորդեց:

304. Լևոն Գ. ի յաջորդեց իւր որդին Հեթում Բ. ասիկա կրօնատէր ըլլալուն՝ քիչ ատենէն թագաւորութիւնը Թորոս Գ. եղբորը թողուց և ինք վանք մը գնաց:

— Թորոս Գ. Բն ըրաւ:

305. Թորոս Գ. երկու տարի թագաւորեց և ինքնին հրաժարեցաւ. ուստի Հեթում երկրորդ անգամ թագաւոր եղաւ և Թաթարաց հետ բարեկամացաւ:

— Ո՛վ էր Սմբատ և ի՞նչ ըրաւ:

306. **Հեթում** և **Թորոս** անգամ մը **Ա. Պօլես** գնացին, որովհետև իրենց քայրը **Յունաց** կայսեր հետ ամուսնացած էր. այն ատեն **Սրմբատ** եղբայրնին ինքզինքը **Թազաւոր** պսակեց **Հայոց վրայ**:

— Սմբատ ի՞նչ ըրաւ իւր եղբարց և իրեն ի՞նչ եղաւ:

807. **Հեթում** և **Թորոս** երբ **Ալիկկիա** կը դառնային, **Սմբատ** բռնեց զիրենք, **Թորոս** սպաննեց և **Հեթում**ը բանտարկեց. բայց **Արատանդին** միւս եղբայրնին՝ այս բանիս կատարելով՝ զօրք ժողվեց, **Սմբատը** բռնեց և բանտ դրաւ, **Հեթում**ին ազատեց և ինք **Թազաւոր** եղաւ:

— **Հեթում** կրցաւ մինչև վերջը **Թազաւոր** ել:

308. **Հեթում** **Բ.** երրորդ անգամ **Թազաւոր** եղաւ **Արատանդինի** տեղ, քանզի **Ժողովուրդը** զինքը կը սիրէր. **Արատանդին** նեղացաւ և ուզեց պատերազմի ելնել, **Հեթում** ալ զինքը բռնեց **Ա. Պօլես** զրկեց:

— **Հեթում** **Բ.**ի ո՞վ յաջորդեց:

309. **Հեթում** քանի մը տարիէն **Թազաւորութիւնն** իւր **Աւոն Գ.** եղբորորդոյն յանձնեց և ինքը միայն **Թազաւորահայր** եղաւ:

— **Աւոն Գ.**ի ատեն ինչու **խաղութիւն** եղաւ **Հայոց մէջ**:

310. **Աւոն Գ.** **Ատին** իշխանաց և կրօնաւորաց կեղծաւորութենէն խաբուելով ուզեց որ **Հայոց** եկեղեցական ծէսերը փոփոխէ. այս պատճառաւ շատ **խռովութիւններ** ելաւ **Ժողովրդեան մէջ**:

— **Աւոն Գ.** ինչպէս սպաննուեցաւ:

311. **Ատին** իշխանաց մասնութեամբ՝ **Աւոն Գ.** և **Հեթում**՝ 40ի չափ **Հայ** նախարարաց հետ **Պիլարզու** անուն **Թաթար** զօրասպետէն սպաննուեցաւ:

— **Աւոն Գ.**ի ո՞վ յաջորդեց:

312. **Հեթում** **Բ.**ի **Օշին** եղբայրը **Հայոց** քաջ զօրքերը ժողվեց, **Պիլարզուն** **Ալիկկայէն** փնտռեց և ինք **Թազաւոր** եղաւ:

— **Հայոց** եկեղեցական ծէսերն ի՞նչպէս փոփոխեցան:

313. **Օշին** տեսնելով որ **Ատին**ը իրեն ալ **Թնամութիւն** ընել կ'ուզեն հաշտուեցաւ անոնց հետ, **Ատին** իշխանի մը աղջկը իրեն կին առաւ, և **Ժողովրդեան** բողբոնեւուն ակամջ չգնելով, **Հայոց** եկեղեցական ծէսերուն մէջ պապական եկեղեցւոյն ծէսերը խառնեց, նաև **Հայոց** կրօնաւորներն սկսան պապական կրօնաւորաց զգեստն հագնիլ:

—Օչին ուրիշ բնէր ըրաւ և որչափ թագաւորեց:

314. Եւրոպայի թագաւորներն սկան Օչինի հետ բարեկամութիւն ընել. Օչին անոնց օգնութեամբ Եգիպտացոց դէմ մեծամեծ յաղթութիւններ ըրաւ. Օչին 12 տարի թագաւորեց ու մեռաւ. իր ատենը կործանեցու Անի քաղաքը:

ԼԵՒՈՆ Ե. 21 տ.

Ք. Ե. 1320—1344

—Օչինի ո՛վ յաջորդեց:

315. Օչինի 12 տարեկան տղան Լևոն Ե. յաջորդեց իւր հօրը, բայց ինքը դեռ տղայ ըլլալուն՝ Օչին Պայլ անուն իշխանն ալ խնամակալ եղաւ:

—Օչին Պայլ բնէ ըրաւ:

316. Օչին Պայլ ջանք ըրաւ զՀայերը լատինացրնել և Վիլկիոյ թաղաւորութիւնը լատինաց ձեռքն անցունել. ասոր համար Լևոնին շար կըթութիւն մը տուաւ և Լևոն եղաւ մուլ ու արտաւոր թագաւոր մը:

—Լևոն Ե.ի ատեն ո՛վ արշաւեց Կիլիկիա:

317. Եգիպտոսի Սուլթանը շատ զօրքով Անի

լիկիա արշաւեց. Լևոն տկար ըլլալուն՝ Եւրոպացիներէն օգնութիւն ուզեց, անոնք ալ չտուին, ուստի Վիլկիա շատ խեղճ եղաւ:

—Երկրորդ անգամ որոնք արշաւեցին Կիլիկիա:

318. Երկրորդ անգամ Եգիպտացիք, Թաւթարներն ու Թուրքերը անհամար բաղմութեամբ Վիլկիա վաշեցին և ամեն տեսակ չարիք գործեցին. Լևոն անխելքութեամբ կ'սպասէր որ Եւրոպայի թագաւորներն օգնեն իրեն և անդադար նամակ կը ղրկէր պապին:

—Պապն ու Լատին իշխաններն օգնեցին Հայոց:

319. Պապն ու Լատին իշխանները խօսք տուին որ Հայոց օգնեն. միայն թէ հայերը իրենց կրօնական ազատութիւնը թողուն, Պապին զխաւորութիւնն ընդունին և պապական ըլլան:

—Լևոն Ե. յանձն առաւ Պապին հնազանդիլ:

320. Լևոն Ե. յանձն առաւ որ ամեն կերպով Պապին պիտի հնազանդի. այն ատեն Պապն ալ շատ ուկի ղրկեց, Լևոն այն դրամով Վիլկիոյ աւերակները շինել տուաւ, բայց քիչ ատենէն Եգիպտացիք նորէն կկան և դրնթէ բոլոր Վիլկիան աւերեցին; և անհամար մարդ ջարդեցին:

— Լևոն Ե. որչափ թագաւորեց:

321. Լևոն Լ. իւր ախաւոր, մոլի և թոյլ բնաւորութեամբ շայոց պատուհաս և Լատին իշխանաց խաղաղիկ եղաւ. 21 տարի թագաւորեց և մեռաւ:

Գ

ԹԱԳԱՒՈՐՔ ԼԱՏԻՆՔ

Բ. Ե. 1344—1365

— Լևոն Ե. ի ո՛վ յաջորդեց:

322. Լատին իշխանները Աիլեկիոյ մէջ շատ զորացած ըլլալով միաբանեցան, և Լևոն Լ. ի մեռնելէն յետոյ՝ Ղիւան կամ Արստանդին անուն Լատին իշխանը շայոց վրայ թագաւոր դրին:

— Ղիւան ինչո՞ւ սպաննուեցաւ:

323. Ղիւան սկսաւ բռնութիւն բանեցընել և ուզեց որ շայք իրենց Լիկեղեցւոյն ծէսերը թողուն և բոլորովին Լատինացւոյն ընդունին: շայոց զորքն ու ժողովուրդը կատղելով վրան

վաղեցին և զինքն սպաննեցին՝ տարի մի թագաւորելէ յետոյ:

— Ղիւանին ո՛վ յաջորդեց:

324. Ղիւանին եղբայրը Գուխտոն շայոց թագաւոր եղաւ. ասոր ատենը Լիկեղեցիք Աիլեկիա արշաւեցին և ամեն չարիք զործեցին. Գուխտոն վատութեամբ փախաւ բերդի մը մէջ սպաննուեցաւ:

— Գուխտոն ինչո՞ւ սպաննուեցաւ:

325. Գուխտոն ջանք ըրաւ որ՝ իւր եղբորը պէս՝ զշայեր լատինացընէ, և մանաւանդ սկսաւ շայոց իշխաններն արհամարհել, անոնք ալ բարկացան և զինքը սպաննեցին 2 տարիէն:

— Գուխտոնի ո՛վ յաջորդեց:

326. Գուխտոնէն յետոյ թագաւոր եղաւ Արստանդին Գ. լատին իշխանը. ասիկայ շայոց բարկութենէն վախնալով, խոհեմութեամբ վարուեցաւ հետեւին:

— Արստանդին Գ. ինչ բախտութիւն ըրաւ:

327. Արստանդին Գ. ի ատեն Լիկեղեցիք վերստին Աիլեկիա արշաւեցին անհամար զորքով. բայց Արստանդին զանապան իշխանաց օգնութեամբ՝ պատերազմեցաւ անոնց դէմ և մեծ

Զարդ տարով փակցուց զիրենք: Արստանդին 18 տարի թագաւորեց ու մեռաւ:

ԼԵՒՈՆ Ձ. ԼՈՒՍԻՆԵԱՆ 10 ա.

բ. Ե. 1365—1375

—Արստանդին Գ.ի ո՛վ յաջորդեց:

328. Արստանդին Գ.ի մեռնելէն յետոյ՝ Հոռվմայ Պապին ձեռօք Հայոց թագաւոր եղաւ ԼԼԸՆ Օ. Լուսինեան լատին իշխանը. ասոր աստէն՝ Լգիպտացիք ահազին բաղմութեամբ Արիկիա արշաւեցին և շատ քաղաքներ ու զիւղեր կործանեցին:

—ԼԼԸՆ Ձ. ԲՆԷ ըրաւ Եգիպտացոց դէմ:

329. ԼԼԸՆ Օ. փոխանակ Լգիպտացոց դէմ Արիկիան պաշտպանելու, փախաւ լեռներու մէջ պահուրտեցաւ և 2 տարի շերեցաւ. իշխանները միացան և ուզեցին որ ուրիշ մէկը թագաւոր պահեն. բայց ԼԼԸՆ յանկարծ երեցաւ և վերստին թագաւորեց:

—Իշտե՞ Շապան սուլթանը ԲՆԷ ըրաւ:

330. Քիչ ատենէն՝ Լգիպտացոց Լշրէֆ Շապան սուլթանը անհամար զօրքով Արիկիա

եկաւ, բոլոր քաղաքներուն տիրեց. Միս մայրաքաղաքն ալ առաւ:

—ԻՆչպէս կործանեցաւ Ռուբինեաց թագաւորութիւնը:

331. Հայերը նաև ԼԼԸՆ Օ. թագաւորը, ամուր տեղեր ապաստանեցան. Լգիպտացիք ԼԼԸՆՈՐ բռնելով Լգիպտոս գերի տարին և հոն բանտը դրին 1375ին: ԼՇապէս կործանեցաւ Ռուբինեաց թագաւորութիւնը որոյ պատճառեղաւ Հայոց տգիտութիւնը և լատին կրօնաւորաց չարամտութիւնը:

—ԼԼԸՆ Ձ. զբռնի բանտը կեցաւ և ուր մեռաւ:

332. ԼԼԸՆ Օ. 7 տարի բանտը կենալէն յետոյ ազատեցաւ, Լբուսաղէմ ուխտի գնաց, անկէ Լբուպա անցաւ, քանի մը տարի կեցաւ Սպանիա, Գաղղիա և Մնդղիա և վերջապէս 1,393 նոյեմբեր ամսոյ 22ին մեռաւ ՚ի Փարիզ:

—ԼԼԸՆ Ձ.ի մարմինն ուր թաղուեցաւ:

333. ԼԼԸՆ Օ.ի մարմինը թաղուեցաւ Փարիզ քաղաքը Գաղղիոյ թագաւորաց թաղուած Մէն—Տընի անուն եկեղեցոյն փառաւոր դամբարանին մէջ, մինչև հիմա իւր գերեզմանին վրայ կը տեսնուի իւր արձանը, և Լատիներէն լեզուաւ արձանագիր մը հետեւեալ իմաստով,

ՀՈՍ ԿԸ ՀԸՆԴՉԻ

Լեւոն Զ. Լուսինեան

Լարին արայ Հայոց

Իջևան ազնուագարմ եւ ամենապատիւ

ՈՐ

Իւր հոգին աւանդեց

Ի մեռա Աստուծոյ

Ի 22 Կոտիքերէ 1393

Ի Փարեզ:

ՄԱՍՆ ՎՅՅԵՐՈՐԻ

ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻԻՆ ՀԱՅՈՑ

Բաղրատունեաց թագաւորութեան կործանելէն յետոյ Հայաստան քանի մ'օտար իշխաններու ձեռք անցաւ. ասոնք 40 տարի ամեն շարութիւն դործեցին խեղճ Հայ ազգին, յետոյ զանազան բռնաւորներ և թագաւորներ տիրեցին մինչև 1828. այն ժամանակ Հայաստան

Պարսից, Ռուսաց և Օսմանեանց իշխանութեան ներքև բաժնուեցաւ:

Հայոց պատմութեան այս մասն երեք բաժանում ունի, որք են

Ե. Հին ժամանակ

Բ. Միջին ժամանակ,

Գ. Նոր ժամանակ:

ԱՌԱՋԻՆ ԺԱՄԱՆԱԿ

ԱՐՁԱՒԱՆԷԹ ԱԹԱՐԱՅ ԵՒ ԱՅԼՈՑ 154 ա.

Բ. Ե. 1233—1387

—Ո՛չ էր Մէլքշահ և Ի՛նչ ըրաւ:

334. Բաղրատունեաց թագաւորութեան կործանելէն 40 տարի ետքը Պարսից Մէլքշահ թագաւորն անհամար զորքով Հայաստան եկաւ Յոյներն և ուրիշ իշխանները վաճառեց և ինք տիրեց բոլոր երկրին:

—Մէլքշահի մեռելէն յետոյ Ի՛նչ եղաւ Հայաստան:

335. Մէլք շահի մեռնելէն յետոյ արիւնհղակ թաթարներն Հայաստան յարձակեցան:

շատ քաղաքներու տիրեցին, սաստիկ նեղեցին զՀայերն և վերջապէս տիրեցին բոլոր Հայաստանի:

—Ո՛վ էր Չարմազան և Բնչ ըրաւ:

336. Քրիստոսի 1,233 թուին Հայաստան վազեց թաթարաց Չարմազան զօրավարը. այնպէս թռնաւորն ուր որ մարդ գտաւ՝ ջարդեց, և մեր հայրենի երկիրը դրեթէ անշէն աս նապատ դարձուց:

—Այս թշնամեաց դեմ Հայերն Բնչ կ'ընէին:

337. Այս ատենները մեր ազգը խիստ տկարացած էր. որովհետեւ ամենքն ալ ազէտ ըլլալով չէին կրնար միարանիչ և օտար թշնամին վռնտել, ուստի ամեն մէկը մէկ մէկ կողմ կը փախէր անձն ազատելու համար. թշնամիք ալ զերենք անօգնական գտնելով կ'սպաննէին կամ գերի կը բռնէին:

—Թաթարներէն յետոյ որո՞նք տիրեցին Հայաստանի:

338. Թաթարները բաւական ատեն տիրեցին Հայաստանի. իրենցմէ յետոյ Հայաստան մաս մաս Պարսից, Օսմանցուց, Թուրքմէններուն և Քիւրտերուն իշխանութեան ներքեւ մնաց:

ԼԵՆԿ ԹԻՄՈՒՐ 23 տ.

Բ. Ե. 1387—1410

—Ո՛վ էր Լենկ Թիմուր:

339. Իողպէք կոչուած Թաթարներուն Լենկ Թիմուր կամ Թիմուր Լենկ թագաւորը՝ բոլոր Թաթարստանի տիրելէ յետոյ՝ Հայաստան արշաւեց.

—Ի՞նչ ըրաւ Լենկ Թիմուր Հայաստանէ մըջ:

340. Լենկ Թիմուր Հայաստանի մէջ՝ այնպիսի անդթութիւններ ըրաւ, որոց նմանը չէ տեսնուած. անհամար մարդ ջարդեց, իւր կատաղէ զօրքերը որ քաղաք որ մտան՝ կործանեցին, ջարդեցին, յափշտակեցին, տանջեցին:

—Լենկ Թիմուրի վախէն Ինչ ըսին Հայերը:

341. Շատ Հայեր սարսափելով՝ բոլոր ունեցածնին թողուցին և լեռները կամ անտառները փախան. շատերն ալ Հայաստանէն ելնելով օտար երկիրներ գաղթեցին.

—Լենկ Թիմուր Բնչ ըրաւ Հոսոց զբերել:

342. Արսուի թէ Լենկ Թիմուր Հայաստանի մէջ շատ զբեր ժողկեց և իւր Սփրդանտ

քաղաքը տանելով ամուր աշտարակներու մէջ պահէց :

— Լէնկ թիմուր Ինչ ըրաւ Վան և Սերաստիա քաղաքաց մէջ :

343. Լէնկ թիմուր՝ Վան և Սերաստիա քաղաքաց տիրելէ յետոյ, Վանայ բնակիչները բարձր տեղերէ վար նետելով սպաննեց. իսկ Սերաստիոյ բնակիչներուն շատը ողջ ողջ թաղել տուաւ. այս թշուառներուն թաղուած տեղը մինչև հիմայ Սև հողէր կը կոչուի :

ԿԼԻՒՆԷ

Հայ դիւցազնուհի

— Ո՛վ էր դիւցազնուհին Կարինէ :

344. Երբ թշնամիք ամեն տեսակ չարիքով Հայաստանը կ'աւրէին, Կարինէ անուն Հայուհի մը հռչակաւոր եղաւ. ասիկայ երիտասարդ կին մ'էր և ութ տարեկան զաւակ մը ունէր :

— Կարինէ Ինչ քաղուածին ըրաւ :

345. Կարինէ Թաթարաց ձեռքէն ազատելու համար նիզակ մ'առաւ և զաւկին թևէն

բռնելով՝ սխաւ փախչել, Թաթարներն ետևէն վազեցին, Կարինէ անհնարին ուժով վեց եօթն անգամ ետ դարձաւ և իւր թշնամիներէն շատերը գետին փռեց :

— Կարինէ Ինչպէս մեռաւ :

346. Վայրենի Թաթարները հետզհետէ շատցան և Կարինէ երբ տեսաւ՝ որ զինքը պիտի բռնեն, բարձր տեղ մ'ելաւ՝ ձեռքովը նախ իւր զաւակն սպաննեց և յետոյ ինքզինքն ալ վերէն վար ձգեց ու մեռաւ :

— Ինչպէս կին էր Կարինէ :

347. Կարինէ՝ Հայ կանանց մէջ՝ ազատութեան համար արիւն թափող դիւցազնուհի մ'էր. եթէ մեր ազգին բոլոր կիներն ազատասէր և լուսաւորեալ ըլլային, Հայաստան միշտ ազատ միշտ զօրաւոր և միշտ երջանիկ կ'ըլլար :

ԼԵՆԿ ԹԻՄՈՒՐԷՆ ԵՏՔ 193

Ք. Ե. 1410—1603

— Լէնկ թիմուրէն յետոյ Հայաստան Ինչ եղաւ :

348. Լէնկ թիմուրի մեռնելէն յետոյ զանազան բռնաւորներ վերստին Հայաստան արշաւե-

ցին, և շատ տարիներ մէկ մէկու դէմ պատե-
րազմեցան, դտած մարդերնին սպաննեցին և ամ-
բողջ երկիրն ապականեցին:

—Սովէն Ինչ նեղութիւն կրեցին Հայերը:

349. Այս խռովութեանց ժամանակ սաս-
տիկ սով եղաւ, և թշուառ ժողովուրդն սկսաւ
կատու, մուկ, ծառի տերևներ, և ուրիշ զա-
նազան տեսակ աղտոյղի բաներ ուտել, մինչև
անգամ ոմանք իրենց բարեկամներն, քոյրերն ու
զաւակները մորթեցին ու կերան:

—Այս թշուառութենէն ազատելու համար Ինչ ըրին Հայք:

350. Այս սարսափելի թշուառութիւններն
այնչափ շատցան Հայաստանի մէջ, որ շատ հա-
յեր ելան Սողտաւիա, Աւստրիա, Հոովմ և
ուրիշ երկիրներ գնացին:

—Հայերը Ինչպէս Պօլիս գաղթեցան:

351. Քրիստոսի 1451 թուականին Տաճ-
կաց Ֆաթիհ Սուհամէտ սուլթանը՝ Յունաց
Արստանդին կայսեր դէմ պատերազմի ելաւ, և
Ա. Պօլսոյ տիրելով Յունաց կայսրութիւնը կոր-
ծանեց, այն ատեն շատ Հայ ընտանիք Հայաս-
տանէն ժողկելով բերաւ Ա. Պօլսոյ մէջ բնակե-
ցուց:

—Պօլսոյ պատրիարքութիւնն ո՞վ հաստատեց:

352. Սուլթան Սուհամէտ Ի. Ա. Պօլսոյ
մէջ Հայոց պատրիարքութիւն մի հաստատեց
և Ա. պատրիարք դրաւ Պրուսայու Յովակիմ
եպիսկոպոսը:

Այս պատրիարք ըսուածը՝ Տաճկաց իշխա-
նութեան ներքև զանուող բոլոր Հայոց կրօնա-
կան պուխն է:

—Տաճիկք երբ սիրեցին Հայաստանի:

353. Տաճիկք, կամ որ նոյնն է Օսման-
եանք, առաջին անգամ Սուլթան Մէհմէտ
Ի-ին ատեն Հայաստան յարձակեցան և յետոյ
կամաց կամաց Պարսից ձեռքէն առին ամբողջ
երկիրը 1585ին:

ՇԱՀ ԱՊՊԱՍ 17 ա. ԵՒ ԻՐՄԷ ՅԵՏՈՅ 102 ա.

բ. Ե. 1609—1722

—Ո՞վ էր Շահ ապգաս և Ինչ ըրաւ:

354. Շահ ապգաս՝ Պարսից թագաւորը՝
Հայաստանի տիրել ուզելով անհամար զօրք
ժողկեց և Օսմանցոց դէմ պատերազմի ելաւ
1603ին, իւր անխիղճ զօրքերը շատ քաղաքնե-

րու և դիւզերու տիրեցին, ամենուն ունեցածն յափշտակեցին և բիւրաւոր զերի բունեցին, Եւս ապապաս այս գերիները Պարսկաստան զրկեց:

— Օսմանցոց Սուլթանն Բնու ըրաւ Եւս ապապսի զեմ:

355. Օսմանցոց Սուլթանը շատ զօրքով իւր Սինան փաշայ զօրապետը Եւս ապապսի զեմ զրկեց, Եւս ապապս խորհեցաւ որ զուցե Տաճիկներէն յողթուի, ուստի որոշեց շայաստանի մէջ գանուող բոլոր շայերը ժողվել և Պարսկաստան զրկել:

— Ուր ժողովեցան Էայք:

356. Եւս ապապսի զօրքերն անլուր բունութիւններով՝ շայաստանի ամեն կողմերէն 120, 000էն աւելի շայ ժողովեցին և Արարատեան ընդարձակ դաշտը բերին:

— Սինան փաշայի գաւն երբ լսեց Բնու ըրաւ Եւս ապապս:

357. Եւս ապապս երբ լսեց որ Սինան փաշայ շուտով պիտի գայ հասնի, ուզեց որ ժողովուած շայերն անմիջապէս Պարսկաստան զրկէ, ուստի հրաման ըրաւ որ ժողովուրդն Արասի ըսուած գետէն անդին անցնի:

— Էայերն նաւակով կրցան անցնել Երասխէն:

358. Արասի գետէն անցնելու բաւական նա-

ւակներ չըկային, Պարսիկք սկսան ծեծելով և վերաւորելով ստիպել՝ որ ամենքն ալ գետն իջնան և լողալով անդիի կողմն անցնին:

— Էայերն Բնու ըրաւ անցան Երասխէն:

359. Արքայ իսրայիլ շայերը կու լային իրենց թշուառութեան վրայ Պարսիկք զօրքերը շատ մարդ սպաննելով՝ անոնց գլուխները ցիցերու վրայ տնկեցին և ժողովուրդը սարսափեցրնելով ամենը մէկէն գետը նետեցին:

— Այս գործողութեամբ Բնու ըրաւ Էայեր մեռան:

360. 10,000էն աւելի մարդիկ և տղայք գետին ջուրերուն մէջ խեղդուեցան, աղաւտեղներուն մէջէն ալ քանի մը հազար տղայք և աղջկուկք կորան, որովհետեւ Պարսիկք զանոնք առեր փակեր էին:

— Եւս ապապս Բնու ըրաւ աղաւտեղ Էայք:

361. Այս խեղճութենէն աղաւտեղները Պարսկաստանի մէջ տեղաւորեցան, և Եւս ապապս տիրաւ քաղցրութեամբ վարուիլ անոնց հետ, որպէս զի քիչ աստնէն չը փախնին:

— Նոր Զուգայ քաղաքն Բնու ըրաւ ինուեցաւ:

362. Պարսիկք Պուզայ քաղաքն ալ այրեցին և բնակիչները Պարսկաստան ստորին, աստիճանով իջնելով կողմն զուրկեցան:

ալ հոն քաղաք մը շինեցին և անունը դրին
Նոր Ջուղայ:

— Հայաստան ինչպէս բաժնուեցաւ:

363. Հաս ապաստան Օսմանցւոց հետ երկարատե պատերազմներ ընելէ յետոյ հետերին հաշտութիւն ըրաւ, և Հայաստան բաժնուեցաւ սոյն երկու պետութեանց մէջ: Արևելեան մասը Պարսից՝ իսկ Արևմտեան մասն Օսմանցւոց ձեռքը մնաց:

ԴԱԻԻԹ ՍԻԻՆԻ 6 տ.

բ. ե. 1722—1728

— Ո՛վ էր Դաւիթ Սիւնի:

364. Բրիտանոսի 1720 թուին Լազ կոչուած ժողովուրդն Հայաստան յարձակեցաւ, ասոնց դէմ զնելու համար քանի մը կորիճ Հայեր միացան և իրենց զուէս դրին Դաւիթ Սիւնի իշխանը:

— Ի՞նչ ըրաւ Դաւիթ Սիւնի:

365. Դաւիթ Սիւնի իրեն օգնական առաւ Մխիթար և Տէր Աւետիք անուն զորապետները և քանի մը հազար հոգի ժողովելով պա-

տերազմեցաւ Պարսից և Աղերուն դէմ և վճռեց զանոնք Հայաստանի մէկ մասէն:

— Դաւիթ Տաճկաց դէմ ինչ ըրաւ:

366. Դաւիթ Հոլիճոր անուն բերդ մը շինեց, 70,000 Տաճիկներ Դաւիթի վրայ եկան և Հոլիճորը պաշարեցին, Դաւիթ 400 քաջ Հայեր հետն առնելով պատերազմեցաւ և 13,000 հոգի ջարդեց թշնամիներէն, մնացածներն ալ փախցուց:

— Դաւիթ ո՞վ յաջորդեց:

367. Դաւիթ 6 տարի քաջութեամբ կառավարեց իրեն հետ միացող Հայերը և խաղաղութեամբ մեռաւ, իրեն յաջորդեց Մխիթար զօրապետը, բայց քանի մը մասնիչ և չարագործ Հայեր Մխիթարն սպաննեցին և զուէսը կորելով Դաւրէժ քաղքի փաշային տառին:

— Այս մասնիչներն ինչ պատիժ առին:

368. Դաւրէժի փաշան այս անիրաւներուն գործած սոսկալի վատութիւնը տեսնելով բարկացաւ և իսկոյն կորել տուաւ զուէսին: Մասնիչներու վարձքն այս կ'ըլլայ:

— Մխիթարէն յետոյ ինչ եղաւ Հայաստան:

369. Մխիթարէն յետոյ քանի մը Հայ իշ-

խաններ ալ ջանք ըրին որ ազատ ըլան, բայց մէկ մէկու հետ միարան և սիրով չըբայնուն՝ ամենքն ալ յաղթուեցան և Հայաստան դարձեալ Օսմանցուց և Պարսից իշխանութեան ներքև մտաւ :

ՄԻԻԹԱՐ ԵՐԲԱՅ 1701ին

— Այլ էր Միիթար և ի՞նչ ըրաւ :

370. Միիթար անուն Սերաստացի զիանա-
կան վարդապետը, 1715ին Սենեաի քաղքին մօտ կղզի մը մէջ Ս. Ղազար անուն վանք մը շինեց, և Հայաստանի զանազան կողմերէն աշակերտներ ժողովելով սկսաւ անոնց ուսմունք և կրթութիւն տալ :

— Միիթար ի՞նչու Պապական եղաւ :

371. Միիթար անունով որ Ատին կրօնաւորը զինքն հանգիստ չէին թողուր, յանձն առաւ որ Պապին հըւ մնայ. և ասանկով Միիթար բոլոր վանականներով Պապական եղաւ, իւր բոլոր աշակերտներն իւր անունով Միիթարեանք կոչուեցան :

— Սենեայի վանքն ի՞նչու շինուեցաւ :

372. Միիթար վարդապետի աշակերտն

րէն ոմանք՝ Ս. Ղազարու վանքէն ելնելով Սենեա քաղաքը գնացին, և հոն պաշտպան Ս. Եստուածածին անուն վանք մը շինեցին և սկսան արուեստից և գիտութեանց զբաղել :

— Այս վանքերէն որոնք էլան :

373. Թէ Սենեաիկի և Թէ Սենեայի վանքերէն շատ ընտիր զիանախաններ և ուսումնականներ ելած են. ինչպէս են Ղախիջախեան, Եգոնց, Սիւրմէլեան, Թովմաճան, Ինձիձեան, Եւեոխեան, Սարգիս Թեոդորեան, Ե. Սատաթիս Քարաքաշեան, Եյվազովչարի, Երուանդ և Գեորգ Հիւրմիզեան, Եւգերեան, Բազրատունի Երսէն Վափտաս, Ղեոնդ Ելիշան, Խորէն և Եմբրոսիոս Քալֆայեան, և ուրիշ շատ հոչակաւոր անձինք, ասոնք բազմաթիւ թարգմանութիւններ և հեղինակութիւններ զրած ու հրատարակած են :

— Այս Պապական վարդապետաց մէջէն որոնք Լուսաւորչական եղան :

374. Եյվազովչարի և Քալֆայեան Եմբրոսիոս ու Խորէն, նաև Թեոդորեան Սարգիս վարդապետներն ասկէ 20 տարւոյ չափ յետոյ Պապականութիւնք թողելով Լուսաւորչական ե-

զան. ասոնց կարգէն էր նաև Ա. Ս. Վարա-
քաշեան:

Կ. ՊՕԼՍՈՅ ՊԵՏՐԻԱՐԲԱՅ ՂՐԱՅ ԳԻՏԵԼԻԲ

— Կ. Պօլսոյ Հայոց առաջին Պատրիարքն ո՞վ եղաւ:

375. Տաճկաց Ֆաթիհ Մէհմէտ Բ. սուլ-
թանը Ա. Պօլսոյ տիրեց 1415ին և Յունաց
կայսրութիւնը կործանեց, այն ատեն Ա. Պօլիս
բերել տուաւ Պրուսայու Յովակիմ եպիսկոպո-
սը՝ որ իրեն վաղեմի բարեկամն էր, և զանկէպ
իւր իշխանութեան ներքեւ եղող Հայոց վրայ
պատրիարք այսինքն հոգևոր գլուխ դրաւ:

— Յովակիմին յաջորդներն որո՞նք եղան:

376. Յովակիմէն յետոյ հետզհետէ պատ-
րիարքներ նստան Ա. Պօլսոյ մէջ, որոց ամենքն
ալ վարդապետ կամ եպիսկոպոս էին:

— Այս վարդապետք կամ եպիսկոպոսութեանը ի՞նչ վիճակ-
ապատրիարք կ'ըլլային:

377. Այս վարդապետներէն կամ եպիսկո-
պոսներէն շատերը պատրիարք ըլլալու համար
ժողովուրդը կը խաբէին, ամեն տեսակ չարիք կը
գործէին, և Տաճկի փաշաներուն դրամ տալով
Պատրիարքութիւնը ծախու կ'առնէին:

— Պատրիարքաց չար գործերը տեսնելով ի՞նչ կ'ընէր ժո-
ղովուրդը:

378. Պատրիարքաց չար գործերուն համար
ժողովուրդեան մէջ շատ անգամ խռովութիւն
կ'եղնէր, որովհետև Պատրիարքները բռնութեամբ
ասկէ անկէ ուզածնին կ'առնէին և չտուողները
շատ անգամ բանտարկել կամ մեռցունել կու-
տային:

— Պոչո՞ որո՞նք կը կոչուէին:

379. Շատ հարուստներ ալ պատրիարքնե-
րու հակառակելով զանոնք կը հանէին, և եր-
բեմն քանի մը աշխարհականներ մէկտեղ գալով
Պատրիարքի տեղակալութիւն կ'ընէին, այս աշ-
խարհականները Պապա կը կոչուէին:

— Ուրիշ հայ պատրիարք ո՞ր կար:

380. Ա. Պօլսէն զատ Հայ պատրիարք մ'ալ
Լըրուսաղէմ քաղաքը Ս. Յակոբ վանքին մէջ
կը նստէր, բայց երբեմն կ'ըլլար որ թէ Ա. Պօլ-
սոյ և թէ Լըրուսաղէմայ պատրիարք մէկ հոգի
կ'ըլլար,

— Աւետիք պատրիարքի վրայ ի՞նչ գիտելիք կայ:

381. Վրիստոսի 1700 թուին ատենները
Պօլսոյ Պատրիարքաց մէջ երեւել եղաւ Աւե-
տիք վարդապետ անուն ազգասեր և ճարտարա-

— Ռուսի Հայոց մէջ որոնք երևելի եղան:

387. Ռուսի Հայոց մէջէն շատ երևելի ան-
ձինք եղան և զօրապետութիւն ընելով մեծա-
մեծ քաջութիւններ ըրին, ասոնց մէջ անուանի
եղան Արկայնաբազըւն Երզնէթեանց, Մովսէս
Կնէազ և այլ շատեր:

— Ռուսի Հայոց գրական վիճակն ինչպէս է:

389. Ռուսի Հայաստանին, ինչպէս նաև
Ռուսաց Բեթերպուրկ մայրաքաղաքին մէջ
շատ ընտիր գրքեր և լրագրեր հրատարակուած
են, հռչակաւոր եղած է Հիստորիայ անուն
լրագիրը՝ զոր իբր 16 տարի յառաջ Միքայէլ
Նալբանդեանց անուն ուսումնական և հայրենա-
սէր երիտասարդը կը խմբագրէր:

— Իջմիածին վանքն ո՞ր է:

390. Ռուսի Հայաստանի մէջ է մեր Ս.
Գրիգոր Լուսաւորչին շինած Ս. Իջմիածին
վանքն, ուր կը նստի Հայոց ընդհանրական կա-
թողիկոսը որ է վեհափառ Գեորգ Դ:

ՊԱՐՍԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ

թ. Ե. 1828

— Ռուսի Հայ կայ Պարսից իշխանութեան ներքև:

391. Ռուսերը 1828ին Պարսից Հայաս-
տանի մէկ մասն առին և Պարսից իշխանութեան
ներքև պզտիկ մաս մը մնաց, ուր գրեթէ 100,
000 հայեր կը բնակին. ասոնք ամենքն ալ, բաց
ի պզտիկ մասէ մը, ուսմունքէ և կրթութենէ
զուրկ են, կանոնաւոր վարժարան և լրագիր
չունին:

— Պարսից Հայաստանի Հայոց նիւթական վիճակն ինչպէս է:

392. Պարսից Հայաստանի հայերը միշտ
չարաչար նեղութիւն կը կրեն Պարսիկներէն,
վասն զի Պարսիկները Մահմետական և բար-
բարոս ըլլալով՝ թշնամութեամբ կը նային Հա-
յոց վրայ, այս պատճառաւ Պարսից իշխանու-
թեան ներքև գտնուող Հայերը ընդհանրապէս
աղքատ և չքաւոր են:

— Այս նեղութենէն ազատիլ ուղղներն ինչ կ'ընեն:

393. Պարսից Հայաստանի հայերէն շատե-
լը իրենց կրած նեղութենէն ազատելու համար

մեծ բազմութեամբ Ռուսաստան և Հնդկաստան կը գաղթեն, արդէն 150 տարիէ ՚ի վեր հայք սկսած էին Հնդկաստան գաղթել, որով քիչ ատենէն այն ահագին և ճոխ երկրին հարստութիւններ վաճառականութեամբ ձեռք անցուցին մինչև Ենդղիացոց Հնդկաստանի տիրելը:

— Հնդկաց Հայերուն մէջ նշանաւոր որոնք կան:

394. Պարսկաստանէն Հնդկաստան գաղթող հայերը շատ հարուստ են, ուսման և կրթութեան մէջ ալ շատ յառաջացած. ասոնց մէջ երևեցին եղած է Սամուէլ Սուրատ վաճառականը. ասոր գրամով Փարիզ քաղքին մէջ Սուրատեան անուն վարժարան մը բացուեցաւ. նոյնպէս Ռաֆայէլ վաճառականը՝ որուն կտակած գրամով ալ Մենետիկ քաղքին մէջ Ռաֆայէլեան անուն վարժարան մը բացուած է:

ՏԵՃԿԸՍԵՆԻ ՀԵՅՔ 139 տարուան միջոց

բ. Ե. 1700—1839

— Տաճկաստանի Հայոց վիճակն Լեւզէս էր 1700ին:

395. Տաճկի սուլթանները Կ. Պօլսոյ տիրելէ յետոյ՝ Ասիոյ մէջ ալ հետզհետէ աշխարհակա-

լութիւններ ընելով 1700ին Հայաստանի մեծադոյն մասին տէր եղան, իրենց իշխանութեան ներքև գտնուող Հայերը՝ բազդատմամբ Պարսկաստանի Հայոց՝ հանդիստ կենցաղ ունեցին:

— Կրօնական պաշտամանց համար արգելք չունեցին բնաւ:

396. Տաճիկ ժողովուրդը Մահմէտական ըլլալով՝ երբեմն հալածանք կը հանէր Հայոց՝ ինչպէս նաև ուրիշ քրիստոնէից դէմ. այս պատճառաւ հազարաւորներ նահատակուած են, բիւրաւոր հայեր ալ տանջանաց չդիմանալով կամ աշխարհական մեծութեան ցանկալով Մահմէտական եղած են. բայց տաճիկ Սուլթանները զանազան հրովարտակներ հանած են՝ որոնցմով կրօնական պաշտամանց համար ամեն ազատութիւն շնորհած են թէ Հայոց և թէ ուրիշ ազգաց:

— Տաճկաստանի Հայոց նիւթական շահն ուսկից էր:

397. Հայք Տաճկաստանի մէջ շուտով յառաջ գնացին, բոլոր երկրին վաճառականութիւնը, արհեստները, սեղանաւորութիւնն և այլ կարևոր գործերը՝ բաց ՚ի քաղաքական և զինուորական պաշտօններէ՝ զրեթէ իրենց ձեռքն անցուցին, մեծամեծ հարուստներ ելան իրենց մէ-

Չէն՝ որոնք տէրութեան հաւաքելիք տարեկան տուրքերը կը դնէին և տէրութեան նախարարաց զրամ փոխ կու տային: Ասանկներն Ափրայ կը կոչուէին:

—Տաճկաստանի Հայոց բարոյական կենցաղն Բնչւոյ էր:

398. Տաճկաստանի Հայք թէ Տաճկաստանի և թէ օտար երկիրներու միւս ժողովուրդներէն գերազանց էին բարոյական հանգամանօք մինչև հիմայ ալ Հայոց համեստութիւնը, աշխատասիրութիւնը, հաւատարմութիւնը ու բարեսրտութիւնը նշանաւոր կ'երևցընէ զերևիք ուրիշ ազգաց առջև:

—Հայք կրօնական Բնչ վեճեր ունեցան Տաճկաստանի մէջ:

399. Սատին կրօնաւորք ամեն ջանք ընելով մաս մը հայեր Պապական ըրած էին, և կ'աշխատէին որ բոլոր հայերն ալ իրենց կողմը շահին. բայց երբ 1700ին Աւետիք պատրիարքն անյայտ ըրին, Հայոց և Պապականաց մէջ խռովութիւնը շատ մեծցաւ ու անեց մինչև 1730. այս խռովութեան երեսնէն շատ պատրիարքներ գահընկէց եղան, շատ անձինք գլխատուեցան կամ աքսորուեցան տաճկի տէրութեան հրամանաւ, և վերջապէս 1827ին ձեռն ատեն Պօլիս գտնուող

Պապական հայերը բոլորն ալ աքսոր գնացին յԱսիա, այս աքսորանաց ատեն բազմաթիւ ընտանիք մեռան:

—Ինչ եղաւ 1830ին:

400. Մինչև 1830 Պապական հայք մեր եկեղեցիները կու գային և մեր կրօնականք կը հովուէին զերևիք, բայց նոյն թուին՝ սուլթան Սահմուտ Բ. տաճկաց ինքնակալը՝ Պաղղղոյ դեսպանին միջնորդութեամբ՝ իրենց յատուկ պատրիարք սահմանեց, մասնաւոր եկեղեցիներ շէնելու հրաման տուաւ և այսպէսով ազգն եղաւ երկու մարմին՝ Ռասաւորչական և Պապական:

—Ափրայից մէջ ո՞վ նշանաւոր եղաւ:

401. Ափրայից մէջ ամենէն նշանաւորն եղաւ Յարութիւն Պէզճեան, ծնաւ 1771ին և սպրեցաւ 63 տարի, աղքատի զաւակ էր. բայց իւր հանձարով ու աշխատութեամբ հետզհետէ յառաջացաւ տէրութեան գործոց մէջ, զրամանոցին դուխ եղաւ, և տաճկաց տէրութեան նեղ ատենին այնպիսի անձնուէր ծառայութիւններ մատոյց նմա, որ սուլթան Սահմուտ Բ. իւր արքայական պատկերի պատուանշանն ընծայեց իրեն. և զինքն այնչափ սիրեց որ քովէն չէր զատեր:

— Ազգեան Յարութիւն Ք'նչ բարեք ըրաւ:

402. Պէզճեան Յարութիւն թէ Պօլիս և թէ հեռու տեղուանք բազում եկեղեցիներ շինեց և զանոնք զարդարեց, վարժարաններ կանդեց և անոնց եկամուտ պատրաստեց. Ա. Պօլսոյ մօտ Ազգ. հիւանդանոցը կառոյց և անոր հասոյթներ որոշեց. առանց խտրութեան՝ ամեն ազգի աղքատաց առատ առատ ողորմութիւններ տուաւ բոլոր կենացը մէջ, և այսպէսով իւր քարի անունը անմահացուց: Պէզճեան՝ ազգին ամենէն հազուագիւտ բարեբարներէն մին է. մահուան ատեն, 1834 յունվար 7, Տաճկաստանի ամեն ազգերը, մինչև սուլթան Մահմուտ Բ. ինքնակար, դառնապէս լացին:

— Ազգեանի մարմինը ուր թաղուեցաւ:

403. Պէզճեանի մարմինը թաղուեցաւ Ա. Պօլիս Գուլմագարու թաղը իւր շինել տուած մայր եկեղեցոյ գաւթին մէջ ուր իւր գերեզմանը մինչև հիմայ կայ:

ԹՈՒՐԿԻՈՅ, ՀԱՅՈՅ ԱԵՃԱԿԸ

բ. Ե. 1836—1860

— Ո՛ր էին Միսիօնարք և ի՞նչ ըրին:

404. 1835ին Ամերիկայէն միսիօնար (առաքելալ) կոչուած քանի մը մարդիկ եկան Պօլիս և հետզհետէ տարածուեցան շայաստանի շատ կողմերը, ասոնք սկսան նոր տեսակ քրիստոնէութիւն քարոզել և շայոց եկեղեցին հեղեփելու կոչել. բազում միամիտ մարդիկ իրենց կողմը շահեցան ձրի գրքեր տարածելով և զրամբաշխելով. քանզի իրենք միշտ զանձեր կ'ընդունէին Ամերիկայի Պօքոթ անուն ընկերութենէն. Միսիօնարաց քարոզած քրիստոնէութիւնը Բողոքականութիւն կոչուեցաւ:

— Ո՛րեւ էնչեր ըրին Միսիօնարք:

405. Միսիօնարք հայոց սիրտը կատարելապէս շահելու համար Պօլսոյ Պէպէք գիւղին մէջ վարժարան մի հաստատուցին և բազմաթիւ հայ աղքատ տղայք ժողվելով ձրի խնամք տարին անոնց և զանազան լեզուներ ու գիտութիւններ ուսուցին, բայց հայք տեսնելով որ Միսիօնարք

Ղուսաւորչական եկեղեցին պառակտելու ետեւէն, հեռացան անոնցմէ և սկսան իրենց վարժարանները բարեկարգելու հոգ տանիլ:

— Ինչպէս բաժնուեցան բողոքականք Հայաստանեայց եկեղեցիէն:

406. Հայոց կրօնաւորները նոզովք կարդացին մոլեռանդ բողոքականաց դէմ, որով Ղուսաւորչականաց և բողոքականաց մէջ մեծամեծ և աղետալի վէճեր ելան. վերջապէս սուլթան Մէճիտ կայսրը յատուկ ազգապետ դրաւ անոնց և հայ ազգը կրօնական հերձուածով երեք մասի բաժնուեցաւ, Ղուսաւորչական, Հռովմէական (պապական) և Բողոքական:

— Կրթութիւնն ինչպէս արածուեցաւ Հայոց մէջ:

407. Պօլսոյ հայերը ամեն թաղի մէջ թէ աղայոց և թէ աղջկանց վարժարաններ բացին, մասնաւոր անձինք և գլխաւորապէս անձնուէր վարժապետներ ալ ջանք ըրին ազգին զուակուէրն յառաջ տանելու ուսմանց մէջ. բազմաթիւ երիտասարդներ Եւրոպայի այլ և այլ մեծ քաղաքներն երթալով գիտութիւններ սովորեցան, նոյնպէս Օմիւռնիոյ, Սեբաստիոյ և այլ մէկ քանի մեծ քաղաքաց հայերը շատ ծաղիկեցան,

որով քիչ ատենէն լրագիրներ և ընտիր գրքերու բազմաթիւ թարգմանութիւններ ու հեղինակութիւններ հրատարակուեցան և նախնաց երևելի գործերն ալ տպագրուելով հայ գրաբառ ընթուճ ծաղիկեցուցին:

— Ազգին կրթութեան ծառայողներուն մջ որո՞ք երեւել եղան:

408. Ազգին կրթութեան ծառայողներուն մէջ երևելի եղան Մինէճի Անդրանիկ, 1846ին Սամաթիոյ վարժարանին տեսուչը, ուրկէ ելնող աշակերտներէն շատերն այսօր հռչակաւոր եղած են. Գրիգոր վարժապետ Փէշտիմալճեան Գումգափուի վարժարանին հայկաբան դասատու, այս վարժարանէն ալ շատ նշանաւոր աշակերտներ եղած են. Խաչատուր վարժապետ Սամաթիոյ, Տ. Մեսրոպը վարժապետ, Թազուր վարժապետ, Տ. Յովհան Միրզա Անանդեցի, Ը. Օմիւռնիոյ վարժարանին մէջ որ ամենէն բարեհամբաւ վարժարաններէն մին եղած է:

— Ուրիշ որ վարժարանները մեծ արդիւնք ունեցան:

409. Հայոց արդիւնաւոր վարժարաններ եղան նաև Իւսկիւտարի ձեմարանը՝ որ գիշերօթիկ էր 1838ին. Ազգ. հիւանդանոցի մէջ Ս.

Փրկչեան գիշերօթիկ վարժարանը, Խասպիւղե վարժարանն և այլք :

— Ի՞նչ է Թանգիմաթը :

410. Թանգիմաթը 1839 նոյ՝ Յին տաճկաստանի մէջ հաստատուած օրէնքն է, որով Հայ, Տաճիկ, Յոյն, Հրեայ և ուրիշ ազգեր տէրութեան առջև հաւասար պիտի սեպուէին, մէկ անձ մը ուրիշ անձի վրայ բռնութիւն բանեցընելու իրաւունք պիտի չունենար, և ամեն մարդ իւր սիրած կրօնքն ազատ համարձակ պիտի դաւաներ ու պաշտէր :

— Ի՞նչպէս հաստատուեցաւ Թանգիմաթը :

411. Թաւուրճեան Յովակիմ անուն հայ երիտասարդը դէպքով մը տաճկացիք և յիսոյ ուրացութեանը վրայ զղջալով դարձեալ քրիստոնեայ եղեր էր. բայց Մահմետականք հրապարակաւ գլխատեցին զինքը Պօլսոյ մէջ. Լուրդայի մեծամեծ տէրութիւններն այս բանը մարդկութեան և քրիստոնէութեան նախատինք համարելով՝ բողոք բարձին և սուլթան Մէճիտ անմիջապէս հաստատեց Թանգիմաթը :

— Թանգիմաթն անմիջապէս դորձադրուիլ կրցաւ :

412. Տաճիկ ժողովուրդը կրթուած չըլլալով :

չուտով չուզեց հպատակիլ Թանգիմաթին, ուստի տէրութիւնը ազգու միջոցներ ձեռք առաւ և սկսաւ կարելի եղածին չափ Թանգիմաթին այլ և այլ մասերը դորձադրել և ժողովրդեան բարքը մեղմացնել. Պօլսոյ Մահմետականք հետզհետէ վարժուեցան, բայց դաւառացիք ըմբոստ եղան, և մանաւանդ քիւրտերը շարունակեցին իրենց տեսակ տեսակ բռնութիւններն ու աւազակութիւններն Հայոց դէմ. Սուլթանին հրամանաւ քանի մը անգամ զօրաբանակներ խրկուեցան Տաճկաստանի ամեն կողմը և ապստամբները քիչ մը հնազանդեցուցին օրինաց :

— Հայոց ազգային վեհանձն ի՞նչպէս էր Պօլսոյ մէջ :

413. Պօլսոյ հայերը հետզհետէ բազմացան և եղան մինչև 200,000. բայց պատրիարքներն յատուկ օրէնք չունենալով՝ չէին կրնար թէ Պօլսոյ և թէ դաւառաց միլիօնաւոր հայերն բտարժանեոյն կառավարել, և քանի մը հարուստներու հետ միանալով բռնութիւններ ալ կը դործէին. Պօլսոյ ժողովրդեան մէջ այս պատճառաւ խռովութիւններ ելնելով՝ քանի մ'անձինք զլիսաուսեցան և շատեր ալ սքսորուեցան :

տերութեան հրամանաւ. շատ պատրիարքներ ալ փոխուեցան, մինչև որ 1849ին ազգային երկու ժողովներ կազմուեցան Վերագոյն և Հոգևոր անունով՝ որոնք պատրիարքաց հետ կը տնօրինէին ազգային դործերը:

— Ի՞նչ և ինչու եղաւ Խրիմի պատերազմը:

414. 1853ին Տաճկի, Վաղղիոյ, Մեղղիոյ և Սարտէնիոյ տերութիւնք մեծ պատերազմ բացին Ռուսի դէմ. քանզի Ռուս կողմէր որ Տաճկաստան իւր ազդեցութեան ներքե առնու. այս պատերազմն երեք տարի տևեց Ռուսն յաղթուեցաւ և Տաճկի տերութիւնն անոր գործել ուզած թշնամութենէն ազատեցաւ:

— Ի՞նչ եղաւ Խրիմի պատերազմին արդիւնքը մեր ազգին համար:

415. Խրիմի պատերազմին պատճառաւ, Տաճկաստանի ժողովուրդք մանաւանդ Հայք և Յոյնք սերտ հաղորդակցութիւն հաստատեցին Լարոպացուց հետ, որով վաճառականութիւնն և արհեստք նոր կենդանութիւն առին. Յոյնք վաճառականութեան՝ Հայք ալ արուեստից մէջ շատ յառաջ գնացին:

Գ

ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿ

ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԷՆՅՈՑ

Բ. Ե. 1860—1870

— Ի՞նչպէս էր 1860ին Տաճկաստանի Հայոց վեճակը:

416. 1860ին Տաճկաստանի գաւառաց մէջ Հայք անհանգիստ էին. մէկ կողմանէ բարբարոս քրդաց հարստահարութիւնները, միւս կողմանէ Չորպանի կոչուած հայոց և առաջնորդաց շատերուն բռնութիւնները՝ չարաչար նեղեցին զիրենք, աղքատութիւնն ընդհանուր եղաւ. բիւրաւոր գաւառացի հայեր աշխարհիս մեծամեծ քաղաքները գաղթեցին, մանաւանդ ՚ի Ա. Պօլիս՝ ուր իրենց թիւը 60,000ի ելաւ. ասոնք քանի մը տարիներ օտարութեան մէջ դրամ շահելէ յետոյ կը դառնան իրենց հայրենիքը. Պօլսոյ հայոց մէջ ալ ներքին ծանր խռովութիւններ ելան Սահմանադրութեան պատճառաւ:

— Ի՞նչ էր Սահմանադրութիւնը:

417. Սահմանադրութիւնը հայ ազգին համար շինուած օրէնք մ'էր, զոր խմբագրած էին Աբբունի ճարտարապետ Սարապետ Ամիրայի որդին՝ Նիկողոս Ամիրայ, Ռուսինեան Նահապետ բժիշկը, Գրիգոր Օտեան և այլ նշանաւոր խոհական անձինք. այս սահմանադրութիւնն հաստատուեցաւ 1860 մայիս 24ին Պոլսոյ Պալատ-զափու թաղին Մայր եկեղեցւոյն մէջ՝ ուր ազգ-ընդհանուր ժողովը գումարուած, և անթիւ բազմութիւն հաւաքուած էր:

— Ազգային Սահմանադրութեան գլխաւոր սկզբունքն ո՞րն է

418. Ազգ. սահմանադրութեան գլխաւոր սկզբունքն է «Ամեն մէկ անհատ պարտական է իւր ազգին, ազգն ալ պարտական է իւր ամեն մէկ անհատին»: Այս սկզբամբ՝ Ազգ. բոլոր գործոց կառավարութիւնը ժողովուրդեան ձեռքն անցաւ, ժողովուրդն ալ իւր քուէով երեսփոխաններ ընտրեց, երեսփոխաններն ալ քաղաքական և կրօնական ժողովներն ընտրեցին. պատրիարքն այն ժողովներուն խորհրդովը կը անօրինէ ազգ. գործերը, և պատասխանատու է երեսփոխանաց ժողովոյն: Նաև կաթողիկոսներն ու պատրիարք-

ները երեսփ. ժողովոյն քուէովը կընտրուին կամ պաշտօնընկեց կըլլան:

— Սահմանադրութիւնը կրցա՞ւ գործադրուիլ:

419. Պոլսոյ ժողովուրդեան մէկ մասը, մանաւանդ հին միապետութեան փափաքողները Սահմանադրութեան հակառակ կեցան, ուստի մեծամեծ խռովութիւններ ծագեցան և Սարգիս արքեպիսկոպոս՝ այն ատենի պատրիարքը՝ որ լաւ անձ մ'էր, պաշտօնէն ձգուեցաւ Սահմանադրութեան դէմ կեցած ըլլալուն համար. Սուլթանն այս խռովութիւնը լսելով՝ Սահմանադրութիւնը դադրեցուց, և քննել տալով՝ անոր քանի մը կէտերը փոփոխելէ յետոյ՝ 1863 մարտ 19ին հրամայեց որ նորէն գործադրուի:

— Զէյթունի բնակչաց վրայ Ի՞նչ տեղեւք կայ:

420. Արիւնիոյ մէջ Օւէյթուն լեռան բնակիչք ամենքն ալ հայ են և հուժկու և աղատասեր մարդիկ 5,000 հոգւոյ չափ. ասոնք թեթեւ տուրք մը կու տային Օսմանեան տէրութեան և գրեթէ անկախ կ'ապրէին հայրենեաց գրկին մէջ, բայց՝ շրջակայ տաճիկ բնակչաց գրգռութեամբը, տէրութիւնն 1860ին, անկանոն զօրաց բանակ մը ղրկեց Օւէյթունը նուա-

ձեռու համար. հայք գիշեր ատեն վրանին յար-
ձակելով մէկ մասը ջարդեցին մնացեալները փախ-
ցուցին, երկրորդ անգամ կանոնաւոր զօրաց բա-
նակ մը զըկուեցաւ իրենց դէմ. բայց Օւլ-
թունցիք հազաւորութիւն ցուցընելով յանձն
առին տէրութեան ամէն պահանջմունքը կատա-
րել, և սյսպէսով պատերազմ չեղաւ:

— Այս նոր ժամանակի մէջ Հայոց վարժարաններն ու ուս-
մանքն Բնչպէս էին:

421. Մերջին ժամանակներս Պօլսի և գա-
ւառաց մէջ թէ մանչ և թէ աղջիկ տղայոց
համար վարժարաններ բացուեցան, այս վարժա-
րանաց ծախսերը հոգացող բազմաթիւ ընկերու-
թիւններ ալ հաստատուեցան, հասակաւոր ան-
ձանց ևս ուսումնականը համար կիրակօրեայ
վարժարաններ հաստատուած են թէ Պօլսի և
թէ գաւառաց մէջ:

— Տպագրութեան և վանքերու վիճակն Բնչպէս է:

422. Եւջարհի զանազան քաղաքաց մէջ
գրեթէ 30 լրագիր և հանդէսներ կը հրատա-
րակուին, ուսումնական և զիանական գործեր կը
տպուին թէ Տաճկաստանի և թէ Ռուսաստա-
նի մէջ. վանքերն ալ գիշերօթիկ վարժարաններ

և տպարաններ բացուած կան. գլխաւորաբար
Ս. Երուսաղէմի և Արմաշու վանքերը ընտիր
աշակերտներ հասուցած են, երեւի է նաև Ս.
Եւջարհի ձեմարանը՝ Ռուսական Հայաստա-
նի մէջ. Պօլսոյ, Օմիւռնիոյ և Ռուսական
Հայաստանի մէջ թատրոններ ալ կան:

— Ի՞նչ եղաւ 1865ին Պօլսոյ մէջ:

423. 1865ին մարդայոյզ (քօլերա) հիւան-
դութիւնն աշխարհի շատ կողմերը տարածուե-
ցաւ, Պօլսոյ մէջ երկու ամիս տեւեց այս հի-
ւանդութիւնը և օրն հազարաւոր անձինք սպան-
նեց. մարդայոյզէն յետոյ նոյն տարւոյն օգոստոս
25ին՝ ահագին հրդեհ մը Պօլսի քաղաքին գրե-
թէ մէկ չորրորդ մասն այրեց և շատ հայաբնակ
թաղեր մոխիր դարձուց. Եզիպտոսի կուսակալ
Խամպիլ փաշայն առատ նպաստ զրկեց հրկիզե-
լոց:

— Սահմանադրութիւնն ինչու գաղտնեցաւ Բ. անգամ:

424. 1866ին իրաւասութեան խնդիր մը ծա-
գեցաւ Պօլսոյ մէջ. կրօնականներէն շատերը
պնդեցին թէ աշխարհականք կրօնաւոր դատելու
իրաւունք չունին, և խռովութիւն եղնելով ատե-
րութեան հրամանաւ Սահմանադրութիւնը դադ-

րեցաւ : Ը, յն ատենի պատրիարքը՝ Պօղոս արքեպիսկոպոս՝ Սահմանադրութիւնը պաշտպանած ըլլալուն ժողովրդեան աչքէն ինկաւ, և 1869ի սկիզբները մեծ խռովութիւն մ'երևելով ստիպուեցաւ հրաժարիլ պաշտօնէն.

— Պօղոս պատրիարքի ատեն գաւառահայոց վեճակն Էնչպէս էր :

425 Պօղոս պատրիարքի ատեն գաւառահայոց վեճակն ամեն կերպով դէշտած էր. մանաւանդ 1868ին Մուշի կողմերու հայք անհնարին նեղութիւններ կը կրէին քիւրտերու երեսէն, այս թշուառութեան առաջքն առնելու համար Խրիմեան Մկրտիչ անուն հայրենասէր եպիսկոպոսը՝ որ Աննայ և Մշոյ մէջ քանի տարիներէ ՚ի վեր լուսաւորութիւն կը տարածէր, ազդու բողոք մը գրեց Արմոյ կուսակալին և խնդրեց որ կառավարութեան կողմէն զօրքեր ու քննիչներ զրկուին Հայաստանի մէջ քիւրտերու գործած չարութեանց վախճան տալու համար. կուսակալն անձամբ իւր բանակին առաւ, և Մուշ երթալով քիւրտերը զսպեց, զլուսւորներն ալ Պօլն զրկեց :

— Խրիմեան եպիսկոպոս Էնչպէս պատրիարք եղաւ :

426. Պօղոս պատրիարքի անկումէն քանի մը

ամիս յետոյ անբութիւնն հրամայեց որ Սահմանադրութիւնը վերստին գործադրուի, և Երեսփոխանական ժողովը Պատրիարք մը ընտրէ. ազգն առ հասարակ Խրիմեան Մկրտիչ եպիսկոպոսի հայրենասիրութիւնն ու առաքինութիւնը և մեծ տաղանդը ճանչցած լինելով 1869 սեպտ. 4ին Պատրիարք ընտրեց զայն Խրիմեան Պատրիարք ըլլալով անմիջապէս դըրամ հանգանակեց և Պատրիարքարանի պարտուց մեծ մասը՝ 4,000 ոսկւոյ չափ՝ վճարեց. ազգ. ժողովները կարգի դրաւ և Սահմանադրութիւնը գաւառաց մէջ գործադրել սկսաւ :

ՊԱՊԱԿԱՆ ՀԱՅՏ

Բ. Ե. 1829—1870

— Ի՞նչ գիտելիք կայ Պապական Հայոց վրայ :
427. Հասունեան Սնտօն անուն Ստորի պապական վարդապետն ուղեւով պապական Հայոց պատրիարք ըլլալ և Հռօմմաջ Պապէն պատիւ ընդունել, ջանք ըրաւ Պապական հայերը

Լուսաւորչականներէն բարձրովին բաժնելով՝
 Լատին ընել. Հռովմայ Պապն ալ Հասունեանի
 ոյժ տալու համար փառաւորեց զնա, և երբ
 Պապական Հայոց պատրիարքը մեռաւ՝ Պա-
 պին հրամանաւ Հասունեան յաջորդեց անոր:

— Ինչո՞ւ խռովութիւն ելաւ Պապականաց մէջ:

428. 1867ին Պապականաց Լիբանանու կա-
 թողիկոսը մեռաւ, Հասունեան ժողովրդին
 հաւանութիւնը շառած՝ Հռովմ դնաց սւ կա-
 թողիկոս ձեւնադրուեցաւ Պապէն. այս
 պատճառաւ Պօլսոյ մէջ մեծ խռովութիւն ե-
 յաւ. ոմանք կ'ուզէին զՀասունեան, բայց ե-
 րեւելի վարդապետք, գիտնականք և ժողո-
 վրդեան լուսաւորեալ մասը դէմ կեցան և
 Պապին բողոքեցին Հասունեանի դէմ. Պապն
 զՀասունեան պաշտպանեց և թուղթ զրկեց Պօ-
 լիս, որով կ'իմացնէր թէ Պապական Հայոց բո-
 յոր եկեղեցիները և ազգ. հաստատութիւնք ու-
 ոտացուածք Պապին իշխանութեան ներքև ան-
 ցած են և թէ ժողովրդեան պարտքն է առանց
 գիտողութեան հնազանդիլ Հասունեանի:

— Պապին կոնդակն ընդունուեցաւ:

429. Պապին զրկած կոնդակը լուսաւորեալ
 Պապականաց կողմէն չընդունուեցաւ, իսկ
 Հասունեանի պաշտպանք ընդունեցին զայն,
 այսպէս երկու մեծ կուսակցութիւններ կազ-
 մուեցան. հակառակ եղողներն Հակահա-
 սունեանք, իսկ կողմնակիցներն Հասունեանք
 կոչուեցան. սաստիկ վէճեր եղան: Այս ա-
 տեմներն Հռովմի մէջ հազարաւոր կրօնաւորք
 ժողովուելով Հռովմայ Պապն անսխալ հրատա-
 րակեցին. իմաստուն մարդիկ այս անսխալու-
 թեան դէմ խօսեցան ըսելով՝ թէ Աստուծոյ ժայն
 է ուրաւ Հասունեանք Պապին անսխալութիւնը
 ընդունեցին, Հակահասունեանք մերժեցին:

— Հակահասունեանք ինչպէս բաժնուեցան:

430. 1869 յունվար 23ին բաղմաթիւ հա-
 կահասունեան ժողովուրդ և վարդապետներ
 ժողովեցան 'ի Բէրա՝ Համազգեաց անուն
 ընկերութեան տունը. հոն բողոքեցին Հա-
 սունեանի ազգակործան բաղձանաց դէմ.
 դաւանագիր մի ստորագրեցին, որով կը

յայտնէին թէ իրենք Պապին և անոր պաշտօնէից անիրաւ վճիռներուն չեն հնազանդիրք : այս դաւանագիրն ստորագրողները կոչուեցան Արքեւեան Կաթօլիկ Հայր, ասոնք Պօլսոյ և գաւառաց մէջ բազմաթիւ եկեղեցիներ ձեռք անցուցին և կառախարութիւնն ալ իրենց յատուկ Պատրիարք հաստատեց :



ՄՄ Հայագիտական գրադարան



MAL046066

